



**Հաշվապահության Ուսուցման Միջազգային
Կենտրոն**

**Մասնագիտական կրթության
կառավարման տեղեկատվական
համակարգի շահառուների
տեղեկատվական կարիքների
հետազոտություն. Արդյունքների
վերլուծություն**

Երրորդ հաշվետվություն

28 փետրվարի, 2011թ.

Երևան

Բովանդակություն

Օգտագործված հապավումների ցանկ

1. Հետազոտության նպատակն ու խնդիրները.....	4
2. Հետազոտության մեթոդաբանությունն և ընտրանքը.....	7
3. Շահառու խմբերի տեղեկատվական կարիքները.....	11
3.1. Շահառու խմբերի տեղեկատվական կարիքների փորձագիտական զնահատումը.....	11
3.2. Ուսանողների տեղեկատվական կարիքները	22
3.3. Մասնագիտական ուսումնական հաստատությունների ղեկավար կազմի տեղեկատվական կարիքները	33
3.4. Դասախոսների և վարչական աշխատողների տեղեկատվական կարիքները.....	41
3.5. Գործատուների տեղեկատվական կարիքները	46
3.6. Զբաղվածության գործակալությունների տեղեկատվական կարիքները.....	50
4. Ամփոփում.....	54

Հավելված 1 – Դաշտային աշխատանքների ամփոփ պատկեր

Օգտագործված հապավումների ցանկ

1	ԿԳՆ	Կրթության և գիտության նախարարություն
2	ՈԱԱԿ	Որակի ապահովման ազգային կենտրոն
3	ՄԿՈՒԶԱԿ	Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոն
4	ՄԿԿՏՀ	Մասնագիտական կրթության կառավարման տեղեկատվական համակարգ
5	ՄՈՒՀ	Մասնագիտական ուսումնական հաստատություն
6	ՄԿՈՒ	Միջին մասնագիտական կրթություն
7	ԿՏԱԿ	Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն ՊՈԱԿ
8	ԿԾԿ	Կրթական ծրագրերի կենտրոն ԾԻԳ
9	ԿԱԻ	Կրթության ազգային ինստիտուտ ՓԲԸ
10	ԵՊՀ	Երևանի պետական համալսարան
11	ԲՈՒՀ	Բարձրագույն ուսումնական հաստատություն
12	ՄՄՈՒՀ	Միջին մասնագիտական ուսումնական հաստատություն

1. Հետազոտության նպատակն ու խնդիրները

Այս հետազոտությունն իրականացվել է Մասնագիտական կրթության կառավարման տեղեկատվական համակարգի տեխնիկական հակտորոշիչների մշակման ընդհանուր պայմանագրի շրջանակներում: Հետազոտության հիմնական նպատակն էր՝

դուրս բերել մասնագիտական կրթության կառավարման տեղեկատվական համակարգի նկատմամբ առկա հիմնական կարիքները շահառու խմբերի շրջանում:

Հետազոտության ընթացքում իրագործված հիմնական խնդիրները հետևյալն էին.

1. Հետազոտել ՄԿԿՏՀ ներդրման միջազգային առաջավոր փորձի հետազոտություն
2. Բարձրագույն կրթությանը վերաբերող բոլոր նորմատիվ փաստաթղթերի (Օրենք Բարձրագույն կրթության մասին, ՀՀ Կառավարության որոշումներ, ԿԳՆ որոշումներ և այլն) ուսումնասիրություն
3. ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության կողմից օգտագործվող գործին առնչվող բոլոր փաստաթղթերի՝ ներառյալ տվյալներ ի հավաքագրման հարցաթերթիկների ուսումնասիրություն
4. Տվյալների հավաքագրման, ներմուծման և վերլուծության ամբողջ ընթացակարգի ուսումնասիրություն
5. Տեղական Կրթության կառավարման տեղեկատվական համակարգի (ԿԿՏՀ) գործարկման ուսումնասիրություն
6. “Բուհերի առկա վիճակը և կապը ավագ դպրոցի հետ նախնական գնահատում և հետազոտություն” եզրափակիչ հաշվետվության ուսումնասիրություն՝ պատրաստված ՀՈՒՄԿ Կրթական հիմնադրամի կողմից (Երևան 2009),

- մասնավորապես այն հատվածների, որոնք վերաբերում են մասնագիտական կրթության հաստատությունների մասին տեղեկատվության մատչելիությանը
7. Նախնական հետազոտություն իրականացնելու մեթոդաբանության մշակում՝ բացահայտելու մասնագիտական կրթության հաստատությունների (ՄՈՒՀ-եր) վերաբերյալ տվյալների պահանջները, ներառյալ սահմանման մեթոդաբանությունը (որակական, քանակական կամ երկուսի համադրությամբ) և հետազոտության հետ կապված որոշակի հարցեր, որոնք պետք է արծարծվեն հետազոտության մեջ
 8. Հետազոտության ճշգրիտ ընտրանքի մշակում
 9. Ուսումնասիրության համար անհրաժեշտ հետազոտության գործիքների (հարցաթերթիկներ, ֆոկուս խմբեր, հարցազրույցի ուղեցույցեր, և այլն) մշակում
 10. Դաշտային աշխատանքների իրականացում՝ կիրառելով ԿՕԿ և այլ համապատասխան գործակալությունների (ԿԳՆ ,ԿՏԱԿ, ՈԱԱԿ, բուհեր, մմուհեր) հետ նախապես համաձայնեցված մեթոդաբանությունը, ընտրանքի և հետազոտության գործիքները
 11. Ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ եզրափակիչ հաշվետվության մշակում՝ հայերեն և անգլերեն լեզուներով, ընդգրկելով տեղեկատվության ապահովման մանրամասն պահանջների ցուցակը ՄՈՒՀ-երի հետևյալ կատեգորիաների համար.
 - Աշխատակազմ- վարչական և սկադեմիական աշխատակազմ; տեխնիկական աշխատակազմ,
 - Ակադեմիական/կրթական գործառույթներ,
 - Ուսանողներ- Բակալավրի ծրագիր, Մագիստրոսի ծրագիր, հետբուհական կրթություն,

- Ֆինանսական կառավարում- աշխատակազմի և ուսանողների ֆինանսավորում, պետական ֆինանսավորում, օտարերկրյա ֆինանսավորում,
- Ենթակառուցվածք - շինություններ, հողատարածքներ, դասավանդում և մեթոդաբանական ունեցվածքներ, և այլն,
- և այլն:

Այս խնդիրների շարքի 1-9-րդ կետերը իրականացվել և ներկայացվել են առաջին հաշվետվության շրջանակներում: 10-րդ կետի իրականացման վերաբերյալ պատրաստվել և ներկայացվել է երկրորդ հաշվետվությունը: Սույն հաշվետվությունը ներկայացնում է խնդիրների շարքի 11-րդ կետով նախատեսված արդյունքների ամփոփ վերլուծությունը: Այս պայմանագրի շրջանակներում նախատեսվող վերջնական հաշվետվությունը ներառելու է ՄՈՒՀ-երից տվյալները հավաքագրելու համար նախատեսված հարցաթերթիկի էլեկտրոնային նախագիծը և ՄԿԿՏՀ տվյալների բազայի համակարգչային ծրագրի տեխնիկական հատկորոշիչները:

2. Հետազոտության մեթոդաբանությունն ու ընտրանքը

Հետազոտությունը իրականացվել է՝ օգտագործելով կարիքների գնահատման ուսումնասիրության մեթոդաբանությունը և կիրառելով որակական և քանակական մեթոդներ: Այս հետազոտության շրջանակներում օգտագործվել են ինֆորմացիայի հավաքման հետևյալ մեթոդները.

1. Ֆոկուս խմբեր ՄՈՒՀ-երի դասախոսների և վարչական աշխատողների հետ
2. Հարցաթերթիկային հարցում ՄՈՒՀ-երի ուսանողների հետ
3. Խորին հարցազրույց ՄՈՒՀ-երի ղեկավար կազմի ներկայացուցիչների հետ
4. Փորձագիտական հարցազրույց կրթության ոլորտի համապատասխան փորձագետների հետ
5. Ֆոկուսավորված հարցազրույց գործատուների և աշխատանքի տեղավորման գործակալությունների ներկայացուցիչների հետ:

Յուրաքանչյուր մեթոդով մշակված հետազոտական գործիքները և իրականացված հարցումների վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը ներկայացված են առաջին և երկրորդ հաշվետվությունների շրջանակներում:

Հետազոտության ընտրանքն իրականացվել է բազմաստիճան նպատակաուղղված ընտրանքի ռազմավարությամբ՝ հիմնված հետազոտության օբյեկտի մասին նախնական բովանդակային վերլուծության վրա: Ընտրանքի

կառուցման առաջին աստիճանի համար հիմք են ծառայել երկու չափանիշ՝ ՄՈՒՀ-երում սովորողների թիվը մեկ հաստատության հաշվով ըստ մարզերի և ՄՈՒՀ-երի քանակն ըստ մարզերի: Ըստ այդմ, հետազոտությունն իրականացվել է ՀՀ երկու մարզերում՝ Լոռիում և Գեղարքունիքում, ինչպես նաև Երևանում տեղակայված ՄՈՒՀ-երում: Հետազոտության շրջանակներում ներառված ՄՈՒՀ-երի ընդհանուր ցանկը ներկայացված է Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. Հետազոտության շրջանակներում ներառված ՄՈՒՀ-եր

	Հիմնական ընտրանքում ընդգրկված ՄՈՒՀ-եր	Իրականացված հետազոտությունը
1	Երևանի պետական համալսարան	Խորին հարցազրույց, հարցաթերթիկային հարցում
2	Երևանի պետական ճարտարագիտական քոլեջ	Խորին հարցազրույց, հարցաթերթիկային հարցում, ֆոկուս խումբ
3	Գավառի պետական համալսարան	Խորին հարցազրույց, հարցաթերթիկային հարցում, ֆոկուս խումբ
4	Գավառի պետական երաժշտական քոլեջ	Խորին հարցազրույց, հարցաթերթիկային հարցում, ֆոկուս խումբ
5	Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտ	Խորին հարցազրույց, հարցաթերթիկային հարցում, ֆոկուս խումբ
6	Վանաձորի պետական բժշկական քոլեջ	Խորին հարցազրույց, հարցաթերթիկային հարցում, ֆոկուս խումբ
	<u>Լրացուցիչ ընտրանքում ընդգրկված ՄՈՒՀ-եր</u>	
7	Երևանի ինֆորմատիկայի քոլեջ	Ֆոկուս խումբ, խորին հարցազրույց
8	Երևանի ավանդական բժշկության համալսարան	Ֆոկուս խումբ
9	Երևանի կառավարման և	Ֆոկուս խումբ

	ինֆորմացիոն տեխնոլոգիաների համալսարան	
10	Հյուսիսային համալսարան	Ֆոկուս խումբ, փորձագիտական հարցազրույց
11	Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարան	Ֆոկուս խումբ
12	Երևանի պետական տեխնոլոգիական քոլեջ	Ֆոկուս խումբ
13	Երևանի պետական հումանիտար քոլեջ	Խորին հարցազրույց
14	Երևանի թեթև արդյունաբերության պետական քոլեջ	Խորին հարցազրույց
15	Երևանի Ն. Աճեմյանի անվ. պետական առևտրի և սպասարկման քոլեջ	Խորին հարցազրույց
16	“Եվրասիա” միջազգային համալսարան	Խորին հարցազրույց, փորձագիտական հարցազրույց
17	<<Հայաստանում Ֆրանսիական համալսարան>> հիմնադրամ	Խորին հարցազրույց
18	Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիա	Խորին հարցազրույց
19	Վանաձորի պետական պոլիտեխնիկական քոլեջ	Խորին հարցազրույց
20	Ռուսաստանի տուրիզմի և սերվիսի պետական համալսարան	Խորին հարցազրույց

	Երևանի մասնաճյուղ	
21	Վանաձորի պետական տեխնոլոգիական քոլեջ	Խորին հարցազրույց
22	Վանաձորի պետական գյուղատնտեսական քոլեջ	Խորին հարցազրույց
23	Երևանի “Մովսես Խորենացի” համալսարան	Ֆոկուս խումբ

Այսպիսով, հետազոտության շրջանակներում ներառվել են 7 մարզային ՄՈՒՀ-եր, 12 բուհեր և 11 մմուհներ, 7 մասնավոր ՄՈՒՀ-եր և 16՝ պետական: Ընդհանուր առմամբ իրականացված հարցումների ծավալն ըստ մեթոդների ներկայացված է Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. Իրականացված հարցումների ծավալն ըստ մեթոդների.

	Մեթոդ	Քանակ
1	Հարցաթերթիկային հարցում	463
2	Փորձագիտական հարցազրույց	17
3	Ֆոկուսավորված հարցազրույց	12
4	Ֆոկուս խումբ	12
5	Խորին հարցազրույց	20

Իրականացված դաշտային աշխատանքները մանրամասն ներկայացված են երկրորդ հաշվետվության շրջանակներում և սույն հաշվետվության **Հավելված 1-ում:**

3. Շահառու խմբերի տեղեկատվական կարիքները

3.1 Շահառու խմբերի տեղեկատվական կարիքների փորձագիտական գնահատումը

3.1.1 Այս հետազոտության շրջանակներում փորձագիտական հարցազրույց է անցկացվել 17 փորձագետի հետ, որոնք ներկայացնում են ինչպես համապատասխան պետական գերատեսչություններ, այնպես էլ մասնագիտական կրթության ոլորտում ծրագրեր իրականացնող միջազգային և հասարակական կազմակերպություններ:

3.1.2 Փորձագետները, մասնագիտական կրթության կառավարման տեղեկատվական

համակարգի ստեղծման աշխատանքները գնահատելով մասնագիտական կրթության ոլորտի լայնածավալ բարեփոխումների համատեքստում, նշում են, որ այդ բարեփոխումներն ընդհանուր առմամբ արդարացված էին և գտնում են համարժեք պետական և միջազգային աջակցություն: Այնուամենայնիվ, նրանց կարծիքով, արդյունքների մասին խոսելը դեռ շուտ է, քանի որ մենք այժմ գտնվում ենք գործընթացի առաջնային փուլերում:

Կրթության ոլորտը կառավարության կարևոր առաջնահերթություններից մեկն է, որտեղ մենք լինելու ենք խստապահանջ՝ նկատի առնելով, որ այստեղից է սկսվում պետության համար արժանի քաղաքացու, աշխարհում իր գիտելիքներով մրցունակ և ամենատարբեր բնագավառներում պահանջարկ վայելող բարձրորակ մասնագետի ձևավորումը: Այս ամենի հիմքում՝ մեր պետության ապագան է, որի նկատմամբ մեզնից ոչ ոք իրավունք չունի անտարբեր լինել:

**Տիգրան Սարգսյան
ՀՀ վարչապետ**

Ներդիր 1

3.1.3 Ըստ փորձագետների, մասնագիտական կրթության ոլորտում բարեփոխումների հիմնական խոչընդոտները հետևյալն են.

- Բարեփոխումների ոչ համակարգված բնույթը, ինչը մի քանի շերտեր ունի.
 - շահագրգիռ գերատեսչությունների միջև համագործակցության պակասը,
 - առանձին ուսումնական հաստատությունների մակարդակով գործընթացների համակարգումը, ինչի արդյունքում երկրի մակարդակով իրականացվող բարեփոխումների ընթացքը լիարժեք կառավարելի չէ,
 - այս ոլորտում առկա դոնորների օրակարգերի և պլանների անհամադրելիությունը;
- Բարեփոխումների համարժեք ֆինանսական ապահովվածության խնդիրը, ինչն օբյեկտիվորեն խոչընդոտում է բարեփոխումների արդյունավետությանը;
- տարատեսակ քննարկման հարթակների բացակայությունը և/կամ եղած քննարկումների ընթացքում ծագած գաղափարների ներդրման հետ կապված տեղեկատվության տարածումը;
- օրենսդրական դաշտի բացերը. փորձագետները նշում են մի շարք գործող օրենսդրական, ենթաօրենսդրական ակտերի վերանայման անհրաժեշտության, մասնավորապես կրթության մասին օրենքի, բուհական և հետբուհական մասնագիտական կրթության մասին օրենքի փոփոխության անհրաժեշտության մասին;
- մասնագիտական կրթական հաստատությունների նյութատեխնիկական հագեցվածության անբավարար վիճակը,

- անհրաժեշտ մարդկային ռեսուրսների սակավությունը և վերապատրաստման կարիքները, որոնք լիարժեք կերպով դեռևս չեն իրացվում: Մասնավորապես, մասնագետները նշում են բարեփոխումներին քաջատեղյակ ադմինիստրատիվ մասնագետների և նորագույն տեխնոլոգիաներին իրագրել դասավանդողների ոչ բավարար թվի մասին;
- նոր պահանջներին համակերպման հոգեբանական խնդիրները ուսումնական հաստատությունների դասախոսական և վարչական աշխատակազմի մոտ, որոշակի ներքին դիմադրության առկայությունը;
- բարեփոխումների հանդեպ հաստատությունների մեխանիկական մոտեցումը, ըստ որի, փոփոխությունը արվում է ոչ թե խորապես հասկացված և իմաստավորված տարբերակով, այլ որովհետև դա սահմանված է երկրի միջազգային պարտավորություններով և համապատասխան ժամանակացույցերով:

3.1.4 Ուշագրավ է, որ փորձագետներից ոմանք հակասական դիրքորոշում ունեն միևնույն գործոնի մասին՝ մի մասը նույն երևույթը դիտում է իբրև բացասական, մյուս մասը՝ իբրև դրական: Մասնավորապես, խոսքը կրթական համակարգի իներցիոն բնույթի մասին է, որը որոշ փորձագետների կարծիքով դրական է, քանի որ կրթական համակարգում պետք է “շտապել դանդաղելով”, փորձագետների մյուս մասի կարծիքով հենց այդ իներցիոն բնույթը թույլ չի տալիս իրականացնել արդյունավետ բարեփոխումներ:

3.1.5 Ինչ վերաբերում է ՄԿՈՒ համակարգին, ապա փորձագետները այստեղ տեսնում են ևս մեկ խոչընդոտ, որն է՝ համակարգի նկատմամբ կրթության այլ աստիճանների շարքում որոշակի իմաստով երկրորդական դիրք զբաղեցնելը՝ թե՛ պետության օրակարգում, թե՛ բնակչության ընկալման տեսանկյունից:

3.1.6 Բարեփոխումները գնահատելով տեղեկատվական հոսքերի տեսանկյունից, փորձագետների մի մասը գտնում է, որ այս գործընթացը բավարար թափանցիկ է և որևէ ստվերայնություն չի պարունակում: Այլ հարց է, ըստ նրանց, թե որքանով արդյունավետ են դրանք լուսաբանվում և որքանով են համապատասխան տեղեկատվական հոսքերը հասնում թիրախային խմբերին: Մասնավորապես, ըստ որոշ փորձագետների, խնդիրը նաև այն է, որ կա լրատվամիջոցների պրոֆեսիոնալիզմի պակաս և միջտ չէ, որ տեղեկությունը ճիշտ է հասցվում թիրախային խմբերին: Այս հարցի կարգավորման մեջ փորձագետները բարձր են գնահատում պետության դերը, որը պետք է խթանի *“ազգաբնակչության վերաբերմունքի փոփոխությանը այս նոր կրթական բարեփոխումների վերաբերյալ”*:

Այսօր Հայաստանում ստեղծվել է մի իր ավիճակ, երբ 100 հազար ուսանողի երկու երրորդը ընտրվում է հանրապետության բուհերում, մեկ երրորդը՝ միջին մասնագիտական հաստատություններում: Մինչդեռ միջազգային առաջընթացի փոքր ձև ուսումնասիրելիս նկատելի է դառնում, որ աշխատաշուկայի գերիշխող մասը զբաղեցնում են ՄԿՈՒ համակարգի շրջանավարտները՝ առնվազն 1:10 հարաբերակցությամբ:

**Մարինե Հակոբյան,
ՄԿՈՒ-ԶԱԿ տնօրեն**

Ներդիր 2

3.1.7 Հետաքրքիր դիտարկում է արել այս տեսանկյունից մեկ այլ փորձագետ, որը գտնում է, թե տեղեկատվությունը բոլոր շահագրգիռ կողմերին մատուցվում է նույն տեսքով, ինչը լիովին չի հասկացվում այնպես, ինչպես որ մտածված էր: Այսինքն, խնդիր է դառնում տարբերակված ուղերձների ներկայացումը տարբեր թիրախային խմբերին՝ յուրաքանչյուրի համար իրեն “հասկանալի լեզվով” և իրեն առավել հուզող խնդիրների շուրջ:

3.1.8 Ըստ փորձագետներից մեկի, “տեղեկատվական հոսքերի մասին խոսելիս պետք է հստակ տարանջատենք 2 բաղադրիչներ՝ ներքին, ներհամալսարանական և ներհամակարգային տեղեկատվական հոսքերը, և հաջորդը դա արտաքին տեղեկատվական հոսքերն են՝ ուղղված հանրությանը, վաղվա սպառողին, որոնք պետք է ապահովեն ԲՈՒՀ-երի մասին արտաքին տեղեկատվությունը: Երկու պարագայում էլ մենք ունենք շատ անելիքներ, քանի որ 2 դեպքերում էլ այդ տեղեկատվությունը ձևավորում են մարդիկ, որոնք բացարձակ չեն խորանում հարցի մեջ, չեն ընկալում խնդիրների էությունը և չեն կարողանում այն ճիշտ անդրադարձել”: Մասնավորապես, փորձագետը սրա վառ ապացույց է համարում այն մտայնությունը, որ ստեղծվել է եռաստիճան կրթական համակարգի վերաբերյալ ոչ ճիշտ տեղեկացված լինելու արդյունքում, այն է՝ որ բակլավրի ուսումը թերի բարձրագույն կրթությունն է:

3.1.9 ՈԱԱԿ-ից հարցված փորձագետը գտնում է, որ “Տեղեկատվական հոսքերի սահմանափակությունը լուրջ խնդիր է հանդիսանում մասնագիտական կրթության ոլորտում գործող բոլոր կազմակերպությունների համար: Չկա որևէ ընդհանուր տեղեկատվական համակարգ, որը կարող է հավաստի և արդիական տեղեկատվության աղբյուր հանդիսանալ”: Այս տեսանկյունից կարևոր նկատառում է արել նաև ՄԿՈՒԶԱԿ-ից հարցված փորձագետը. “Մասնագիտական կրթության վերաբերյալ առկա տեղեկատվությունը ունի մեկ հիմնական թերություն. այն համակարգված չէ, ներկայացվում է առանց զարգացման տենդենցները մատնանշելու: Որոշակի խնդիրներ կան նաև հնարավոր շահառուների համար տեղեկատվության մատչելիության առումով”:

3.1.10 Հարցված փորձագետները տեղեկատվական հոսքերի կազմակերպման տեսանկյունից բարձր են գնահատում ժամանակակից տեխնոլոգիաների կիրառությունը, սակայն նշում են նաև, որ այս ներուժը ամբողջությամբ չի օգտագործվում:

3.1.11 Բնականաբար, տեղեկատվական հոսքերի վերաբերյալ նման կարծիքներից ածանցվում է նաև մասնագիտության կրթության առկա տեղեկատվության հասանելիության մասին փորձագետների կարծիքը, քանի որ խնդիրը ոչ միայն տեղեկատվության ծավալների, այլև դրա տարածման ձևերն ու շահառուների կողմից այն ստանալու ունակությունն են: Ուստի, ըստ փորձագետների, պետք է գտնել ու ներդնել նոր՝ ավելի արդիական, ավելի արդյունավետ ձևեր ու մեթոդներ:

3.1.12 Քննարկվող հարցում մյուս տեսակետն էլ այն է, որ *“այս պահի համար տեղեկատվությունը բավարար է, մնացածը հասարակության խնդիրն է”*, այսինքն՝ հասարակությունը ինքը կարիք ունի նախաձեռնող, ակտիվ լինելու և իրեն անհրաժեշտ տեղեկատվությունը փնտրելու և գտնելու հարցում:

3.1.13 ՈԱԱԿ-ից հարցված փորձագետը գտնում է, որ *“տեղեկատվությունը հաճախ հնացած է կամ ներկայացված է կիրառողի համար շատ անհարմար ֆորմատով: Այդ պատճառով հաճախ նույնիսկ առկա տեղեկատվությունը անհնար է լինում վերլուծել, էլ չասած այն պլանավորման գործընթացներում օգտագործելու անհնարության մասին”*, ՄԿՈԻԶԱԿ-ից հարցված փորձագետն էլ այս տեսանկյունից ավելացնում է, որ *“տեղեկատվության ճշգրտությունն ու հավաստիությունը, համակարգված չլինելու պատճառով, զերծ չի իրարամերժ լինելուց և շփոթություններ առաջացնելուց”*:

3.1.14 Շատ փորձագետներ մասնագիտական կրթության վերաբերյալ առկա տեղեկատվությունը գնահատում են իբրև կցկտուր. *“մասնագիտական կրթության վերաբերյալ տեղեկատվության մակարդակը հեռու է բավարար լինելուց, այն կցկտուր է, չի պարունակում կարևոր մանրամասներ ուսուցանող կազմակերպությունների (ուսումնական պլաններ, ուսուցանող անձնակազմ, մասնագիտությունների նկարագրեր, արտադրական պրակտիկա, հետագա աշխատանքի հնարավորություններ) և այլնի մասին: Անգամ եղած տեղեկատվությունը դժվար հասանելի է հասցեատերերին”*:

3.1.15 Փորձագետներին խնդրվել էր առանձնացնել մասնագիտական կրթության ոլորտում տեղեկատվության հիմնական կրողներին՝ արտադրողներին և սպառողներին: Փորձագետները նշում են, որ տեղեկատվության արտադրողները կարող են միաժամանակ հանդիսանալ տեղեկատվության սպառող, պարզապես տարբեր է սպառվող և արտադրվող տեղեկատվության բովանդակությունը: Այս սահմանազատումը, ըստ էության, պայմանական բնույթ ունի: Այնուամենայնիվ, փորձագետներն առանձնացրել են տեղեկատվության հետևյալ հիմնական արտադրողներին, նշելով, որ նրանցից շատերը նաև տեղեկատվության սպառող են.

- տարբեր պետական կառույցներ, մասնավորապես ՀՀ կրթության և գիտության նախարարությունը,
- նախնական, միջին և բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատությունները,
- ոլորտում գործող գրեթե բոլոր կազմակերպությունները (ԿԱԻ, ԿՏԱԿ, ՄԿՈՒԶԱԿ և այլն),
- զբաղվածության ծառայությունները,
- մարզպետարանները,
- տեղական ինքնակառավարման մարմինները,
- գործատուներն ու գործարարները,
- արհմիությունները,
- երիտասարդական մասնագիտական կողմնորոշման կենտրոնը,
- ԶԼՄ – ները,
- Մասնագիտական կրթության ոլորտի գործիչները,
- Ծնողները,
- Ուսանողները:

3.1.16 Տեղեկատվություն սպառողներին, ըստ ՈԱԱԿ-ից հարցված փորձագետի, կարելի է դասակարգել հետևյալ կերպ.

- Հանրության ներկայացուցիչներ, ովքեր տեղեկատվություն պետք է ստանան իրականացվող բարեփոխումների ընդհանուր ընթացքի վերաբերյալ (ծնողները, ուսումնառուները, գործատուները, խոցելի խմբերը, մեծահասակները (ցկյանս ուսումնառության) և շահագրգիռ անձինք),
- Ուսումնական հաստատություններ, որոնք պետք է ստանան տեղեկատվություն երկրում իրականացվող բարեփոխումների սահմաններում իրենց հաստատություններին անհրաժեշտ աշխատանքների կազմակերպման վերաբերյալ,
- Ոլորտի կառավարիչներ (առաջին հերթին ԿԳՆ), որոնք ոլորտի վերաբերյալ ստացված տեղեկատվության վերլուծության հիման վրա պետք է պլանավորում կատարեն:

3.1.17 Այս հարցի վերաբերյալ իր յուրօրինակ մոտեցումն ունեւ նաև ՄԿՈՒԶԱԿ-ից հարցված փորձագետը. *“Մասնագիտական կրթության ոլորտում տեղեկատվության հիմնական կրողներ են համարվում.*

- 1. պետական կառավարման մարմինները,*
- 2. առևտրաարդյունաբերական պալատը, գործատուների միությունը,*
- 3. զբաղվածության ծառայությունները,*
- 4. համայնքային կառույցները,*
- 5. ուսումնական հաստատությունները:*

Առաջին չորսը հիմնականում հանդես են գալիս որպես մասնագիտական կրթության արդյունքները օգտագործողներ, իսկ հինգերորդը՝ ծառայություն մատուցող: Ըստ կարևորության դասակարգումը նույն պատկերն ունի”:

3.1.18 Փորձագետներին խնդրվել էր նաև գնահատել, թե ինչպիսի տեղեկատվության պահանջարկ կա հիմնական շահառուների շրջանում: Ըստ այդմ, ստացվել են հետևյալ պատասխանները.

Կառավարության համար՝

- տնտեսության զարգացման միտումները,
- աշխատաշուկայի կանխատեսումները,

Գործատուի համար՝

- մասնագիտության նկարագրությունը,
- որակավորումը (մասնագիտացումը),
- ուսուցանող կազմակերպությունների վերաբերյալ մանրամասն տեղեկությունները,
- ուսումնական պլաններ,
- ըստ զբաղմունքի՝ հմտությունները,
- աշխատաշուկայի կանխատեսումները,
- տնտեսության զարգացման միտումները,

Փորձագետի կարծիք

Եթե փորձենք դասակարգել սպառողներին ըստ խմբերի, իմ կարծիքով դրանք երեքն են, առաջինը դրանք դիմորդներն են, ուսանողները, երկրորդը դա գործատուներն են, անուղղակի պատվիրատուները, երրորդը դրանք շահեկիցներն են, չփոթենք շահառուների հետ: I խմբին պետք է ներկա յացվի ԲՈՒՀ-ը, իր մասնագիտությունների մանրամասն նկարագրերով, ցանկով, մասնագիտության հնարավոր աշխատատեղերի մասին, II խումբը պետք է հիմնական ուշադրությունը կենտրոնացնի ուսանողների վերջնական կրթական էլքային արդյունքների վրա, III խումբը կարող են լինել ՋԼՄ-երի ներկայացուցիչները, հասարակական կազմակերպությունները, որոնց գործը պետք է լինի համալսարանի, ԲՈՒՀ-ի ճիշտ իմիջի ձևավորման առաքելությանը ուղղված տեղեկատվությունը:

Ներդիր 3

Դպրոցների շրջանավարտների, ուսանողների, աշխատանք փնտրողներ ի, զբաղվածության պետական ծառայության, կրթական հաստատությունների համար՝

- մասնագիտության նկարագրությունը,
- որակավորումը (մասնագիտացումը),
- ուսուցանող կազմակերպությունների վերաբերյալ մանրամասն տեղեկությունները,
- ուսումնական պլանները,
- աշխատաշուկայի պահանջարկը,
- ըստ զբաղմունքի՝ հմտությունները,
- դասավանդողների վերաբերյալ տվյալները,
- ծրագրերի տևողությունը,
- ուսուցման արժեքը,
- կրթաթոշակների, դրամաշնորհների հնարավորությունը և այլն:

3.1.19 Ըստ սպառողների դասակարգման, պահանջվող տեղեկատվության հետևյալ դասակարգումն է առաջարկվել ՈԱԱԿ-ից հարցված փորձագետի կողմից.

- Ընդհանուր բնույթի տեղեկատվություն,
- Ուսումնական հաստատության մակարդակով վերլուծության իրականացման, որոշումների կայացման և պլանավորման համար անհրաժեշտ տեղեկատվություն,

- Երկրի մակարդակով վերլուծության իրականացման, որոշումների կայացման և պլանավորման համար անհրաժեշտ տեղեկատվություն:

3.1.20 Ինչ վերաբերում է մասնագիտական կրթության վերաբերյալ տեղեկատվության՝ սպառողին հասցնելու ամենաարդյունավետ ուղիների վերաբերյալ հարցին, ապա փորձագետների մեծամասնությունը համակարծիք է նրանում, որ այդ ուղիները պետք է ներառեն ժամանակակից տեխնոլոգիաների, համացանցի արդյունավետ կիրառությունը: Ավելին, փորձագետների մի մասը համոզված է, որ այդպիսի ուղին համապարփակ տեղեկատվական բազայի ստեղծումն է, որն անհրաժեշտ տեղեկատվությունը կմատակարարի տարբեր սպառողներին:

Փորձագետի կարծիք

Դպրոցի շրջանավարտին, ով պետք է կատարի մասնագիտության ընտրություն, պետք է ուղղորդիչ տեղեկատվություն, գործատուին անհրաժեշտ է այնպիսի տեղեկատվություն, որպեսզի ինքը որոշի, թե ինչ ներդրում կատարի այդ ուսումնական հաստատությունում՝ հետագայում լավ կադր ունենալու համար, ուսումնական հաստատություններին անհրաժեշտ է այնպիսի տեղեկատվություն, որպեսզի նա իմանա, թե ինչպիսի կարողություններ, օժտվածությամբ մասնագետ է հարկավոր գործատուին, պետությունն էլ պիտի հստակ տեղեկացված լինի, թե ինչպիսին են հանրության միտումները՝ ուղղորդելու և կարգավորելու համար դրանք:

Ներդիր 4

3.2 Ուսանողների տեղեկատվական կարիքները

3.2.1 Հարցման ենթարկված ուսանողներին խնդրվել էր գնահատել իրենց տեղեկացվածությունն ըստ հետևյալ կետերի.

1. Տեղեկատվություն դասախոսների, վարչական աշխատակազմի վերաբերյալ,
2. Ուսումնական հաստատության իրականացրած ծրագրեր, միջոցառումներ, իրադարձություններ և այլն,
3. Ուսումնական հաստատության իրականացրած գիտահետազոտական ծրագրեր,


Հարցման են ենթարկվել Երևանի պետական համալսարանից՝ 310, Երևանի պետական ճարտարագիտական քոլեջից՝ 11, Գավառի պետական համալսարանից՝ 39, Գավառի պետական երաժշտական քոլեջից՝ 5, Վանաձորի պետական բժշկական քոլեջից՝ 8 և Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտից՝ 97 ուսանողներ:

Ներդիր 5

4. Ուսանողների ֆինանսական աջակցության ծրագրեր, գեղչերի և արտոնությունների ծրագրեր,
5. Ուսումնական հաստատության ուսումնական միջոցներ և ռեսուրսներ, ուսումնական ծրագրեր, գրադարաններ, անհրաժեշտ ենթակառուցվածք,
6. Կոնկրետ մասնագիտությամբ և կոնկրետ բուհի ավարտելուց հետո աշխատանք գտնելու հնարավորություններ,
7. Միջազգային փոխանակման և համագործակցության ծրագրեր:

3.2.2 Ըստ այդմ, իրենց տեղեկացվածություն ու իրենց իսկ կրթական հաստատության դասախոսների և վարչական աշխատողների վերաբերյալ լիարժեք է գնահատել հարցված ուսանողների 12,6 տոկոսը, բավարար՝ 52,8 տոկոսը: 21,4 տոկոսը գտնում են, որ իրենք ավելի շուտ տեղեկացված չեն այս առումով, ևս 13,1 տոկոսը ընդհանրապես տեղեկացված չեն: Այսպիսով, հարցված ուսանողների շուրջ 65,4 տոկոսը բավարար տեղեկացվածություն ունի իրենց հաստատության դասախոսների և վարչական աշխատողների վերաբերյալ:

3.2.3 Ինչ վերաբերում է իրենց ուսումնական հաստատության իրականացրած ծրագրերին, միջոցառումներին և իրադարձություններին, ապա լիարժեք տեղեկացված են ուսանողների 17,7 տոկոսը, բավարար՝ 49,1 տոկոսը: Եվս 22,1 տոկոսը նշել են, որ ավելի շուտ տեղեկացված չեն այս մասին, իսկ 11,1 տոկոսը՝ ընդհանրապես տեղեկացված չեն: Բավարար տեղեկացված ուսանողների թիվը հարցվածների շրջանում կազմում է 66,8 տոկոս:



գ1_1 Տեղեկատվություն դասախոսների, վարչական աշխատակազմի վերաբերյալ


3.2.4 Հաջորդ պարամետրը, որով ուսանողները գնահատել է ին իրենց տեղեկացվածության աստիճանը, տվյալ հաստատության իրականացրած գիտահետազոտական ծրագրերն էին: Այս կետով ստացված արդյունքները հետևյալն են. հարցվածների ընդամենը 4,2 տոկոսն է իրեն համարել լիարժեք տեղեկացված, ևս 23,6 տոկոսը գտնում է, որ ունի բավարար տեղեկատվություն իրականացվող գիտահետազոտական ծրագրերի մասին, 36 տոկոսը նշում է, որ ավելի շուտ տեղեկացված չի, ևս 36,2 տոկոսն ընդհանրապես տեղեկացված չի այս առումով:

3.2.5 Ուսանողների տեղեկացվածությունը բավական բարձր է տվյալ հաստատությունում առկա ուսանողների ֆինանսական աջակցության ծրագրերի,

զեղչերի և արտոնությունների գործող համակարգերի մասին: Այսպես, հարցվածների 24,5 տոկոսը լիարժեք տեղեկատվություն ունի այս մասին, 44,6 տոկոսը՝ բավարար: Միայն 15,1 տոկոսն է, որ նշել է, թե ընդհանրապես տեղեկատվություն չունի այս առումով:

3.2.6 Ուսանողները լավ են տեղեկացված նաև տվյալ հաստատության ուսումնական միջոցների, ռեսուրսների, ուսումնական ծրագրերի, գրադարանների և անհրաժեշտ ենթակառուցվածքի վերաբերյալ: Մասնավորապես, նրանց 28,4 տոկոսը սեփական տեղեկացվածությունն այս առումով գնահատել է իբրև լիարժեք, 48,9 տոկոսը՝ բավարար: Հարցվածների ընդամենը 6,8 տոկոսն է նշել, որ այս մասին տեղեկատվություն ընդհանրապես չունի:

3.2.7 Խնդիրը փոքր-ինչ բարդանում է, երբ հարց է դրվում կոնկրետ մասնագիտությամբ և կոնկրետ բուհի ավարտելուց հետո աշխատանք գտնելու հնարավորությունների վերաբերյալ տեղեկացվածության մասին: Հարցվածների 13,7 տոկոսն է իրեն համարում լիարժեք տեղեկացված այս առումով, ևս 35,7 տոկոսը գտնում է, որ ունի բավարար տեղեկատվություն: Տեղեկատվություն ընդհանրապես չունեն հարցվողների 26,1 տոկոսը:



գ1_6 Կոնկրետ մասնագիտությամբ և կոնկրետ բուհի ավարտելուց հետո աշխատանք գտնելու հնարավորություններ

3.2.8 Տեղեկացվածության մակարդակն ավելի ցածր է միջազգային փոխանակման և համագործակցության ծրագրերի առումով. հարցվածների 71,4 տոկոսը ավելի շուտ տեղեկացված չէ կամ ընդհանրապես տեղեկացված չէ այս մասին:

3.2.9 Ակնհայտ է, որ ուսանողների տեղեկացվածությունն ավելի բարձր է այն ուղղություններով, որոնց հետ նրանք ունեն անմիջական առնչություն, այն է՝ դասախոսական և վարչական աշխատակազմը, ուսումնական միջոցներն ու ռեսուրսները, իրականացվող ծրագրերն ու իրադարձությունները, ֆինանսական արտոնությունների և զեղչերի համակարգերը: Միաժամանակ մտահոգիչ է, որ ուսանողների շրջանում բավական ցածր է տեղեկացվածությունը այնպիսի կարևոր բաղադրիչների առումով, ինչպես սովյալ հաստատության իրականացրած


գիտահետազոտական ծրագրերը կամ միջազգային համագործակցության/ փոխանակման ծրագրերն են:

3.2.10 Ինչ վերաբերում է կոնկրետ մասնագիտությամբ և կոնկրետ հաստատությունն ավարտելուց հետո աշխատանք գտնելու հնարավորությունների վերաբերյալ տեղեկացվածությանը, ապա բավարար տեղեկացվածություն ունեցողների տոկոսը՝ 49,4, կարող է բացատրվել այն հանգամանքով, որ հարցված ուսանողների 41,5 տոկոսը նշել է, որ մասնագիտությունն ընտրելիս հաշվի է առել այն հանգամանքը, որ այդ մասնագիտությամբ հեշտ է աշխատանք գտնելը: Այսինքն, նման տեղեկատվությունը արդեն իսկ օգտագործվում է մինչև ուսանող դառնալը, այնուհետև շարունակում է ակտուալ մնալ մինչև ուսումնառության ավարտը:

3.2.11 Միաժամանակ կ ուսանողներին խնդրվել էր գնահատել իրենց տեղեկացվածության աստիճանը ոչ միայն իրենց սովորած ուսումնական հաստատության, այլև ընդհանրապես մասնագիտական կրթության ուսուցման ոլորտի վերաբերյալ: Մասնավորապես, ուսանողները գնահատել են իրենց տեղեկացվածությունը իրենց ընտրած մասնագիտության գծով առկա ուսումնական հաստատությունների, տարբեր ուսումնական հաստատությունների իրականացրած ծրագրերի և միջոցառումների, գիտահետազոտական ծրագրերի, մասնագիտական կրթության ոլորտում ուսանողների ֆինանսական աջակցության գործող համակարգերի և մասնագիտական կրթության ոլորտում առկա միջազգային փոխանակման և համագործակցության ծրագրերի ուղղությամբ:

3.2.12 Այսպիսով, հարցված ուսանողները բավական լավ են տեղեկացված իրենց մասնագիտության գծով առկա ուսումնական հաստատությունների վերաբերյալ: Մասնավորապես, նրանց 24,9 տոկոսը գտնում է, որ լիարժեք տեղեկացված է, ևս 47,7 տոկոսը՝ բավարար տեղեկացված: Հարցվածների ընդամենը 10,9 տոկոսը չունի տեղեկատվություն այս հարցի վերաբերյալ:

3.2.13 Պատկերը հակառակն է, երբ խոսք է գնում այլ հաստատությունների իրականացրած ծրագրերի, միջոցառումների, գիտահետազոտական ծրագրերի մասին: Հարցվածների միայն 5 տոկոսը ունի լիարժեք տեղեկատվություն այս տեսանկյունից, իրենց տեղեկացվածությունը բավարար են գնահատում 20,7 տոկոսը: 74,3 տոկոսը ավելի շուտ տեղեկացված չէ կամ ընդհանրապես տեղեկացված չէ:



գ2_2 Տարբեր ուսումնական հաստատության իրականացրած ծրագրեր, միջոցառումներ, իրադարձություններ, գիտահետազոտական ծրագրեր և այլն

3.2.14 Ինչ վերաբերում է մասնագիտական կրթության ոլորտում առկա ուսանողների ֆինանսական աջակցության ծրագրերին և արտոնությունների համակարգերին, ապա այս ոլորտում լիարժեք տեղեկացվածության մասին նշում են հարցվածների 13,3 տոկոսը, բավարար տեղեկացված են 35,4 տոկոսը: 51,4 տոկոսը կամ ավելի շուտ տեղեկացված չեն կամ ընդհանրապես տեղեկացված չեն:

3.2.15 Մասնագիտության կրթության ոլորտում առկա միջազգային փոխանակման և համագործակցության ծրագրերի վերաբերյալ լիարժեք տեղեկացվածություն ունեն հարցված ուսանողների ընդամենը 4,1 տոկոսը, 25,4 տոկոսը բավարար են տեղեկացված: Հարցվածների զգալի մասը՝ 70,5 տոկոսը կամ բավարար չի տեղեկացված, կամ ընդհանրապես տեղեկացված չի:

3.2.16 Ըստ ուղղությունների տեղեկացվածության աստիճանների այսպիսի տարբերությունները կարելի է բացատրել տվյալ ուսանողի համար այդ տեղեկատվության պիտանելիության մակարդակով: Մասնավորապես, իրենց մասնագիտությունների գծով առկա այլ ուսումնական հաստատությունների և ոլորտում առկա ֆինանսական աջակցության ծրագրերի մասին տեղեկատվությունը ուսանողների մեծ մասին անհրաժեշտ է լինում դեռևս նախնական փուլում՝ համապատասխանաբար մինչև ՄՈՒՀ ընտրվելու վերաբերյալ որոշում կայացնելը և ընդունվելուց անմիջապես հետո՝ ֆինանսական աջակցության հնարավոր ձևը ընտրելու ժամանակ:


3.2.17 Այս տեսանկյունից հետաքրքիր է դիտարկել, թե ինչպիսի գործոններ են կարևորել ուսանողները մասնագիտության ընտրության ժամանակ: Ըստ այդմ, հարցվածների 25,2 տոկոսը կարևորել է իր նախասիրությունները, 23,2 տոկոսը այն, որ դա մոդայիկ մասնագիտություն է, 10,1 տոկոսը, որ այդտեղ էր «երաշխավորված» ընդունվելը: Ընդ որում, ուշագրավ է, որ մոդայիկ մասնագիտության գործոնը կարևորողների 87,2 տոկոսն իզական սեռի ներկայացուցիչներն են:

3.2.18 Ուսանողներին խնդրվել է նաև գնահատել, թե որ կետերի վերաբերյալ տեղեկատվությունն է առավել կարևոր նրանց համար՝ իրենց ուսման գործընթացն ավելի արդյունավետ կազմակերպելու համար: Ըստ այդմ, ստացվել է հետևյալ պատկերը.

- Ըստ առանձին մասնագիտությունների սովորողների, շրջանավարտների թվաքանակների մասին ինֆորմացիան շատ կամ բավականին կարևորել են հարցվածների 54,6 տոկոսը,
- Դիպլոմների փոխճանաչման մասին տեղեկատվությունը շատ կամ բավականին կարևորել են հարցվածների 93,4 տոկոսը,
- Ուսանողական վարկային համակարգի մասին տեղեկատվությունը շատ կամ բավականին կարևորել են հարցվածների 83,3 տոկոսը,
- Ուսանողների փոխանակման ծրագրերի մասին ինֆորմացիան շատ կամ բավականին կարևորել են հարցված ուսանողների 86,1 տոկոսը,
- Ուսանողների ներբուհական և միջբուհական տեղափոխման մասին տեղեկատվությունը շատ կամ բավականին կարևոր են համարում հարցվածների 81,9 տոկոսը,
- Արտերկրում սովորելու ծրագրերի և պայմանների մասին տեղեկատվությունը շատ կամ բավականին կարևոր է ուսանողների 92,3 տոկոսի համար,
- Տարբեր ուսումնական հաստատությունների վերաբերյալ հասարակական ընկալումները շատ կամ բավականին կարևոր են թվում հարցված ուսանողների 79,1 տոկոսին:

3.2.19 Ակնհայտ է, որ հարցվածների կողմից առավել կարևորվում են արտերկրում սովորելու պայմաններն ու ծրագրերը, ինչպես նաև դիպլոմների փոխճանաչման մասին տեղեկատվությունը, այն պարագայում, երբ ըստ էության, հենց այս ուղղությամբ ուսանողների տեղեկացվածության ակտուալ մակարդակն ավելի ցածր է. ինչպես արդեն նշվել է վերևում, նրանց 70 տոկոսից ավելին չունի բավարար տեղեկություններ այս առումով:


3.2.20 Ուսանողները գնահատել են նաև սեփական տեղեկատվական բավարարվածությունը մասնագիտությունը/ուսումնական հաստատությունը ընտրելու պահին: Ըստ այդմ, նրանց 22,3 տոկոսը համարում է, որ տիրապետել է որոշում կայացնելու համար անհրաժեշտ ամբողջ տեղեկատվությանը, 48,9 տոկոսը գտել է, որ հիմնական, կարևոր տեղեկատվությունն ուներ: 18,1 տոկոսը սեփական տեղեկատվական բավարարվածությունը գնահատել է անբավարար մասնագիտությունը/ ուսումնական հաստատությունը ընտրելու պահին, իսկ 6,7 տոկոսն էլ նշել են, որ որոշումը կայացրել են տեղեկատվության բացակայության պայմաններում: Եվս 1,3 տոկոս ի փոխարեն որոշումը կայացրել են ծնողները, իսկ իրենք որևէ տեղեկատվություն չեն ունեցել:



գ4 Ինչպե՞ս կգնահատեք Ձեր տեղեկատվական բավարարվածությունը մասնագիտությունը/ուսումնական հաստատությունն ընտրելու պահին.

3.2.21 Ըստ հարցված ուսանողների, մասնագիտական կրթության վերաբերյալ տեղեկատվության ստացման ամենաարդյունավետ տարբերակները հետևյալն են.

1. Համապատասխան տեղեկագրքերի միջոցով – 45 %
2. Հատուկ ինտերնետային կայքի միջոցով, որտեղ կտեղադրվեն համապատասխան տեղեկությունները – 28,4 %
3. Ծանոթների, բարեկամների միջոցով – 11,1 %
4. Ազդագրերին փակցված տեղեկատվական թերթիկների միջոցով – 9 %



գ5 Ձեր կարծիքով, ո՞րն է մասնագիտական կրթության վերաբերյալ տեղեկատվության ստացման ամենաարդյունավետ տարբերակը.

3.2.22 Հարցման արդյունքներով պարզվել է նաև, որ ուսանողների առաջադիմությունը զգալիորեն ազդում է նրա վրա, թե ինչպիսի տեղեկատվությունն

Է պիտանի համարվում ուսանողի կողմից ուսման գործընթացն առավել արդյունավետ կազմակերպելու համար: Ըստ այդմ, ուսման լավ և գերազանց առաջադիմություն ունեցողներն առավել հակված են կարևորել բոլոր տիպի տեղեկությունները և առավելապես այն տեղեկատվությունը, որն առնչվում է արտերկրում սովորելու պայմաններին, դիպլոմների փոխձանաչմանը, ուսանողների փոխանակման ծրագրերին:

3.2.23 Տեղեկացվածության աստիճանի տարբերությունները նկատելի են Երևանում և Երևանից դուրս տեղակայված ՄՈՒՀ-երի ուսանողների պարագայում: Մասնավորապես, Երևանում տեղակայված ՄՈՒՀ-երի ուսանողներն ավելի տեղեկացված են տարբեր ասպեկտներով, քան Երևանից դուրս տեղակայված ՄՈՒՀ-երի ուսանողները:

3.2.24 Տեղեկացվածության աստիճանը տարբեր է նաև բուհերի և մմուհների ուսանողների պարագայում. բուհերի ուսանողները ընդհանուր առմամբ ավելի տեղեկացված են, քան մմուհների ուսանողները:

3.3 Մասնագիտական

ուսումնական

հաստատությունների

ղեկավար կազմի

տեղեկատվական

կարիքները

3.3.1 Խոսելով ՄՈՒՀ-երի

տեղեկատվական

ռազմավարությունների մասին,

չնայած

առկա

ընդհանրություններին, կարելի է

դուրս

բերել

հետևյալ

առանձնահատկությունները. մասնավոր ՄՈՒՀ-երն առավել հաճախ են իբրև տեղեկատվական ռազմավարություն ընտրում դիմորդների, նրանց ծնողների հետ հանդիպումները: Նման հանդիպումները տարածված ռազմավարություն են նաև մնուհների համար:

3.3.2 Մարզային ՄՈՒՀ-երն առավել հաճախ են նշում ոչ ֆորմալ սոցիալական ցանցերի ներուժի օգտագործման մասին, երբ այդտեղ սովորող ուսանողները տվյալ հաստատություն են բերում նաև իրենց ծանոթներին, ընկերներին, ավելին, նրանք սա համարում են նաև արդյունավետության ցուցանիշներից մեկը: Օրինակ, Գավառի

ՄՈՒՀ-երի ղեկավար կազմի ներկայացուցիչների հետ այս հետազոտության շրջանակներում անցկացվել է 20 խորին հարցազրույց: Հարցազրույցներին մասնակցել են հիմնականում բուհերի ռեկտորներ, պրոռեկտորներ և մնուհների տնօրեններ: Խորին հարցազրույցի շրջանակներում շոշափվել են ՄՈՒՀ-երում տեղեկատվական հոսքերի, տեղեկատվության փոխանցման առավել արդյունավետ ձևերի, ՄՈՒՀ-երի գործունեության արդյունավետության գնահատման ցուցանիշների, ղեկավար կազմի տեղեկատվական կարիքների և ՄՈՒՀ-երի տեղեկատվական ռազմավարություններին վերաբերող հարցեր:

Ներդիր 6

պետական համալսարանը հեռավոր բնակավայրերում անհրաժեշտ ինֆորմացիայի տարածման ձև է դիտում ուսանողների միջոցով անվճար տեղեկատվություն փոխանցելը՝ բրոշյուրներ, թերթեր և այլն:

3.3.3 Ըստ էության, տեղեկատվական ռազմավարության կարևորությունը գիտակցվում է հարցված գրեթե բոլոր ՄՈՒՀ-երի ղեկավար կազմի ներկայացուցիչների կողմից: Այս հարցում տարբեր դիրքորոշում ունեն այն ՄՈՒՀ-երը, որոնք ըստ էության մենաշնորհային դիրք ունեն իրենց մարզում կամ քաղաքում: Օրինակ, Գավառի պետական երաժշտական քոլեջի տնօրենը նշեց, որ իրենք կարիք չունեն մշակել հատուկ տեղեկատվական ռազմավարություն, քանի որ իրենց տարածքում միակ նմանատիպ մասնագիտացված հաստատությունն են և սպասարկում են մարզի դպրոցներին, երաժշտական դպրոցներին և այլն: Սակայն ամեն դեպքում սա առավել քիչ հանդիպող դեպքն է, ընդհանուր պրակտիկան տեղեկատվական որոշակի ռազմավարության առկայությունն ու դրա իրականացումն է:

3.3.4 Առավել խոշոր ՄՈՒՀ-երը, ինչպես, օրինակ, ԵՊՀ-ն կամ Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանը, ունեն ավելի ինստիտուցիոնալացված բնույթի տեղեկատվական ռազմավարություններ, ինչպես այդ ուղղությամբ հաստատված հնգամյա հաստատված պլաններ և այլն:

3.3.5 Ինչ վերաբերում է տեղեկատվական հոսքերի կազմակերպմանը ՄՈՒՀ-երի ներսում, ապա որոշ ՄՈՒՀ-եր նշում են հատուկ առանձնացված կառույցների մասին, որոնք ապահովում են արտաքին տեղեկատվական հոսքերը: Դրանք հիմնականում հասարակայնության հետ կապերի և լրատվության բաժիններն են: Ներքին տեղեկատվական հոսքերը կազմակերպվում են պարբերաբար անցկացվող հանդիպումների, որոշ ՄՈՒՀ-երում՝ գործող ներքին լոկալ ցանցի և այլ միջոցներով:

3.3.6 Հարցման ենթարկված ՄՈՒՀ-երի ղեկավար կազմի ներկայացուցիչների մեծ մասը նշում է տեղեկատվության փոխանցման և ստացման համար տեխնոլոգիական նորագույն միջոցների կիրառության փաստի և դրա կարևորության մասին: Մասնավորապես, ՄՈՒՀ-երի մեծ մասը տեղեկատվության ստացման համար օգտվում է ԿԳՆ և այլ պաշտոնական կայքերից, ինչպես նաև իրականացնում է ինտերնետային որոնում անհրաժեշտ տեղեկատվության համար: Նկատվում են նաև էլեկտրոնային փոստի օգտագործման պրակտիկայի հաստատման միտումներ, ինչպես ՄՈՒՀ-ի ներսում՝ վարչական կազմ-դասախոսներ, դասախոսներ-ուսանողներ կոմունիկացիաների տեսանկյունից, այնպես էլ պետական կառույցների հետ հաղորդակցվելու համար: Որոշ ՄՈՒՀ-եր նշում են ներդրված էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության պրակտիկայի, մյուսներն էլ՝ դրա ներդրման պլանների մասին:

3.3.7 Ընտրանքում ներգրավված ՄՈՒՀ-երի մեծ մասն ունեն պաշտոնական կայքեր, որոնք հիմնականում օգտագործում են ընթացիկ նորությունների, իրադարձությունների, ՄՈՒՀ-ում առկա մասնագիտացումների ցանկի, ֆակուլտետների, դասախոսական կազմի նկարագրի, որոշ դեպքերում նաև՝ ուսումնական ծրագրերի ներկայացման համար: Ըստ էության, ՄՈՒՀ-երի կայքերի առկայությունը մասնագիտական կրթության կառավարման տեղեկատվական համակարգում օգտագործման տեսանկյունից որոշակի ներուժ է ներկայացնում: Մասնավորապես, համաձայնեցված տեղեկատվական բաժինների առկայության դեպքում այս կայքերում կարող է բացվել համապատասխան բաժին, որտեղ նախապես սահմանված ժամկետներում կտեղադրվի պահանջվող տեղեկատվությունը:

3.3.8 Հարցման ենթարկված ՄՈՒՀ-երի ղեկավար կազմի ներկայացուցիչները նշում են, որ ունեն հաստատված պրակտիկա՝ պետական կառույցների, մասնավորապես՝ Վիճակագրական ծառայության հետ աշխատելու և պահանջվող տեղեկատվությունը

փոխանցելու առումով: Նման պրակտիկայի առկայությունը բարենպաստ հիմքեր է ստեղծում ՄԿԿՏՀ գործարկման և պահանջվող տեղեկատվության հավաքագրման տեսանկյունից: Այստեղ շատ կարևոր է նշել այն հանգամանքը, որ նման տեղեկատվության հավաքագրումը պետք է իրականացնել համակարգված ձևով և որ առավել ցանկալի է՝ մեկ ՄՈՒՀ-ին նույն տեղեկատվության ստացման համար ըստ հնարավորության դիմել մեկ անգամ: Այս դեպքում առաջնահերթ նշանակություն է ստանում ՄԿԿՏՀ կազմակերպչական աշխատանքների ճիշտ պլանավորումը՝ հաշվի առնելով դաշտում կրթության կառավարման տեղեկատվական այլ համակարգերի առկայությունը:

3.3.9 Հարցման ենթարկված ՄՈՒՀ-երի ղեկավար կազմի ներկայացուցիչներին խնդրվել էր նշել նաև իրենց հաստատատության ներսում կիրառվող արդյունավետության ցուցանիշների մասին: Այս տեղեկատվությունը թույլ կտա հասկանալ նաև, թե ինչպիսի ներքին վիճակագրություն են վարում հաստատությունները և թե ինչպիսի տեղեկատվություն պոտենցիալ կերպով հասանելի կլինի նրանցից: Ըստ այդմ, հարցման ենթարկված ՄՈՒՀ-երի ղեկավար կազմի ներկայացուցիչները նշել են հետևյալ արդյունավետության ցուցանիշները.

- սովորող ուսանողների թիվը,
- դասավանդող դասախոսների մասնագիտական պատրաստվածությունը,
- տվյալ հաստատության ուսանողների ցածր շարժունակությունը այլ ուսումնական հաստատությունների նկատմամբ,
- այլ ուսանողների բարձր շարժունակությունը դեպի տվյալ հաստատություն,
- ուսանողների առաջադիմությունը,
- տվյալ հաստատության ակադեմիական գործունեությունը,
- հաստատության կողմից անցկացվող դաստիարակչական աշխատանքները,

- հասարակության հետ կապերի զարգացման աշխատանքներ,
- ուսումնական պրոցեսի ճիշտ կազմակերպումը,
- կառավարման համակարգի արդյունավետությունը,
- տվյալ հաստատության շրջանավարտների՝ աշխատանքի ընդունվելու ցուցանիշը,
- մասնագիտական կրթական հաստատության բյուջեի ծավալները ըստ տարիների,
- հաստատությունում ուսանողի ինքնազգացողությունը,
- նյութատեխնիկական հազեցվածության աստիճանը,
- ընդունելության քննությունների ընթացքում դիմորդների թիվը,
- ուսումնական և արտադրական պրակտիկաները,
- ուսուցման գործընթացում դասավանդման էլեկտրոնային միջոցների լայն կիրառումը,
- ֆինանսական արդյունավետությունը,
- գրադարանի առկայությունը:

3.3.10 Պետք է նշել, որ չնայած արդյունավետության ցուցանիշների վերոնշյալ շարքին, հարցման ենթարկված ՄՈՒՀ-երի ղեկավար կազմի ներկայացուցիչների մեծամասնությունն առավել կարևոր է համարում շրջանավարտների զբաղվածության ցուցանիշը: Որոշ ՄՈՒՀ-եր անցկացնում են մոնիթորինգ հեռախոսային հարցումների տեսքով, որպեսզի բացահայտեն, թե յուրաքանչյուր տարի իրենց շրջանավարտների որ տոկոսն է աշխատանք գտնում: Ավելին, այդ ՄՈՒՀ-երի մեծ մասն ունի ճշտված տոկոսային կամ թվային տեղեկատվություն այս փաստի վերաբերյալ:

3.3.11 Հենց այս տեսանկյունից ՄՈՒՀ-երի ղեկավար կազմի ներկայացուցիչները շատ բարձր են գնահատում ՄՈՒՀ-գործատու կապը: Սակայն նրանց տեսակետները տարբերվում են այն հարցի վերաբերյալ, թե ով պետք է նախաձեռնող լինի: Հարցվածների մեծ մասն ակնկալում է հետաքրքրվածություն և նախաձեռնողականություն հենց գործատուների կողմից, գտնելով, որ նրանք պետք է ակտիվ լինեն, թելադրեն ՄՈՒՀ-երին իրենց պահանջարկը: Ավելի փոքր մասը կարծում է, որ ՄՈՒՀ-երն իրենք պետք է նախաձեռնողական լինեն գործատուներին ներգրավվելու հարցում: Բայց անկախ այս կամ այն տեսակետին կողմնակից լինելուց, բոլոր հարցվածներն էլ անբավարար են գնահատում ՄՈՒՀ-գործատու կապի այժմյան որակն ու ինտենսիվությունը:

3.3.12 Հարցման ենթարկված ՄՈՒՀ ղեկավար կազմի ներկայացուցիչների կարծիքով մասնագիտական կրթության համակարգի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայումս բավական հասանելի է և բաց: Ըստ նրանց, հետաքրքրված անհատները կամ կազմակերպությունները կարող են անհրաժեշտության դեպքում ստանալ իրենց պետքական տեղեկատվությունը: Խնդրահարույց կարող են լինել առանձին պաշտոնատար անձանց “փակությունը” կամ պահանջվող ինֆորմացիայի ծավալները, սակայն որոշակի նվազագույն տեղեկատվություն հասանելի է հասարակության լայն շերտերին:

3.3.13 Բոլոր հարցվածները իրենց տեղեկացվածության մակարդակը մասնագիտական կրթության համակարգից և ընթացող բարեփոխումներից գնահատում են բավարար և ավելի բարձր: Ըստ այդմ, նրանցից ոմանք նշում են, որ դա իրենց սեփական նախաձեռնողականության արդյունքն է, ոմանք էլ՝ որ դա ուղղակի իրենց պարտականությունն է:

3.3.14 Հարցման ենթարկված ՄՈՒՀ ղեկավար կազմի ներկայացուցիչներին խնդրվել էր նաև գնահատել, թե ինչպիսի տեղեկատվությունն ունի ավելի մեծ պահանջարկ դասախոսների, ուսանողների, դիմորդների, վարչական աշխատողների,

գործատուների շրջանում: Խորին հարցազրույցի արդյունքում ստացվել են հետևյալ դիտարկումները.

- Դասախոսներին առավել կարևոր է առկա ուսումնական պլանների, մոդուլային ծրագրերի և մեթոդական նյութերի մասին տեղեկատվությունը, կրեդիտային համակարգի դասավանդման չափանիշները, համագործակցություն հնարավորությունները, նաև արտաքին, մասնագիտական նորությունները:
- Ուսանողները հետաքրքրված են հետևյալ տեղեկատվությամբ. տարբեր առարկաների վերաբերյալ առաջարկվող խնդիրներով, դրանց լուծման մեթոդներով, նոր մեթոդական նյութերով և հարցաշարերով, կրեդիտային համակարգում սովորելու հիմունքներով, մասնագիտական, գիտահետազոտական ծրագրերի մասին տեղեկատվությամբ, ավարտելուց հետո ուսումը շարունակելու հնարավորություններով, քննությունների արդյունքների մասին տեղեկատվությամբ, համապատասխան օրենքներով, դրանց փոփոխություններով, մասնագիտական նորություններով, օլիմպիադաներով:
- Դիմորդներին հետաքրքրում են մասնագիտական նոր չափորոշիչները, ընդունելության պայմանները և թեստերի օրինակները, վարձավճարի չափը, տվյալ հաստատության ֆինանսական հնարավորությունները:
- Վարչական աշխատողների համար կարևոր է տեղեկանալ ոլորտին վերաբերող նորմատիվային փաստաթղթերին, զարգացման ծրագրերի և և բարեփոխումներին:
- Գործատուները մեծ նշանակություն են տալիս ուսումնառության արդյունքներին, ուսումնական պլանների, ուսանողների գիտելիքների,

կարողությունների և հմտությունների մակարդակի վերաբերյալ ինֆորմացիային:

3.3.15 Հարցման ենթարկված ՄՈՒՀ-երի ղեկավար կազմի ներկայացուցիչները սեփական տեղեկատվական կարիքների տեսանկյունից կարևորում են հետևյալը.

- կրթական չափորոշիչների մասին հստակ տեղեկատվությունը,
- կրեդիտային համակարգի մասին բավարար տեղեկատվությունը,
- արտերկրի մասնագիտական կրթական համակարգերում կատարվող բարեփոխումների առանձնահատկությունների և գործընթացների մասին տեղեկատվությունը,
- մասնագիտական կրթական հաստատության որակի հստակ չափորոշիչների մասին տեղեկատվությունը:

3.3.16 Անկախ կոնկրետ տեղեկատվական կարիքներից, բոլոր հարցվածները շեշտադրել են ստացվող տեղեկատվության օպերատիվության բարձրացման անհրաժեշտության մասին:

3.4. Դասախոսների և ՄՈՒՀ-երի վարչական աշխատողների տեղեկատվական կարիքները

Ֆոկուս խմբերին մասնակցել են 12 մասնագիտական կրթական հաստատությունների 139 դասախոսներ և վարչական աշխատողներ ինչպես Երևանից, այնպես էլ մարզերից: Ֆոկուս խմբերում ընդգրկվել են և մասնավոր, և պետական ՄՈՒՀ-եր:

Ներդիր 7

3.4.1 Ֆոկուս խմբերի արդյունքում ի հայտ են գալիս դասախոսների և վարչական աշխատողների երկու հիմնական խումբ՝ նախաձեռնողական դիրքորոշում ունեցող և պասիվ դիրքորոշում ունեցող:

3.4.2 Նախաձեռնողական դիրքորոշում ունեցող դասախոսներն ու վարչական աշխատողները, որպես կանոն, ավելի տեղեկացված են ընթացող կրթական բարեփոխումներից, ունեն առավել հստակեցված տեղեկատվական կարիքներ և ձևավորված կարծիք բարեփոխումների վերաբերյալ:

3.4.3 Պասիվ դիրքորոշում ունեցող դասախոսներն ու վարչական աշխատողներն առավել շատ են նշում տեղեկատվության պակասի մասին և միևնույն ժամանակ

ավելի հակված են բացասական կարծիք հայտնել մասնագիտական կրթության համակարգում տեղի ունեցող բարեփոխումների վերաբերյալ:

3.4.4 Պասիվ դիրքորոշում ունեցող դասախոսների և վարչական աշխատողների բացասական կարծիքը, սակայն, առարկայական չի, այլ առավելապես ընդհանրական դիրքորոշում է որևէ փոփոխության հանդեպ:

3.4.5 Նախաձեռնողական դի րքորոշում ունեցող դասախոսներն ու վարչական աշխատողներն ունեն ավելի առարկայական կոնկրետ մտահոգություններ և դժգոհություններ՝ կապված մասնագիտական կրթության համակարգի բարեփոխումների հետ:

3.4.6 Նախաձեռնողական դիրքորոշում ունեցող դասախոսների և վարչական աշխատողների տեղեկատվական կարքիներն առավել հստակ են:

3.4.7 Ֆոկուս խմբերին մասնակցած դասախոսների և վարչական աշխատողների կողմից որպես ընթացող բարեփոխումների հիմնական դրական կողմ նշվում է ուսանողի ակտիվության շեշտադրումը, ուսումնական գործընթացի վերածումը փոխներգործուն և ճկուն համակարգի:

3.4.8 Ֆոկուս խմբերին մասնակցած դասախոսների և վարչական աշխատողների կողմից որպես ընթացող բարեփոխումների հիմնական բացասական կողմեր նշվում են “ավելորդ թղթաբանությունը”, դասագրքերի բացակայությունը, նոր պահանջների տեղայնացման խնդիրը, ուսանողների ոչ պատշաճ պատրաստվածության մակարդակը, ինչը հնարավոր չի դարձնում արդյունավետ կերպով ներդնել նոր համակարգը, մասնավորապես՝ ուսանողի անհատական աշխատանքների մասով և այլն:

3.4.9 Որպես տեղեկատվության հիմնական աղբյուրներ, ֆոկուս խմբերի արդյունքում ի հայտ են գալիս դաշտի երեք հիմնական մասնակիցները՝ Կրթության և գիտության նախարարությունը, ՄԿՈՒԶԱԿ-ը և ՈԱԱԿ-ը:

3.4.10 Դասախոսների և վարչական աշխատողների նախաձեռնողականությունը և բարեփոխումների նկատմամբ դրական կամ բացասական դիրքորոշումը կախված չէ տվյալ ՄՈՒՀ-ի տեղակայվածությունից: Այսինքն, ինչպես մարզերում, այնպես էլ Երևանում կան ինչպես նախաձեռնողական տրամադրված դասախոսներով և վարչական աշխատողներով համալրված ՄՈՒՀ-եր, այնպես էլ՝ պասիվ: Այս նույն դատողությունը ճշմարիտ է նաև բարեփոխումների հանդեպ դրական կամ բացասական տրամադրվածության տեսանկյունից:

3.4.11 Ընդհանուր առմամբ, մնուհների դասախոսներն ու վարչական աշխատողները պակաս տեղեկացված են, քան բուհերի դասախոսներն ու վարչական աշխատողները: Մնուհների դասախոսներն ու վարչական աշխատողները նաև առավել բացասական դիրքորոշում են հանդես բերում կրթական բարեփոխումների վերաբերյալ:

3.4.12 Ընդհանուր առմամբ, Ֆոկուս խմբերում մասնակցած դասախոսների և վարչական աշխատողների համար ձևավորված պրակտիկա է Համացանցից օգտվելը՝ համապատասխան տեղեկատվության որոնման նպատակով, ավելին, որպես տեղեկատվության ստացման արդյունավետ միջոց նրանցից շատերը նշում են հենց էլեկտրոնային տարբերակը:

3.4.13 Ընդհանուր առմամբ, եթե տեղեկատվական հոսքերը հաստատված են տվյալ ՄՈՒՀ-ում, ապա այդ տեղեկատվական հոսքերը թափանցիկ են: Ֆոկուս խմբերում ներառված դասախոսներն ու վարչական աշխատողները առավելապես բողոքում են տեղեկատվության հասանելիությունից, քան թափանցիկությունից:

3.4.14 Ֆոկուս խմբերի մասնակից դասախոսներն ու վարչական աշխատողները որպես առավել հասանելի տեղեկատվություն նշում են կրթական գործընթացների վերաբերյալ ընդհանուր տեղեկատվությունը: Նեղ մասնագիտական տեղեկատվության ստացումը նրանց կողմից դիտվում է որպես առավել խնդրահարույց:

3.4.15 Անկախ իրենց նախաձեռնողականության աստիճանից և դրական կամ բացասական դիրքորոշումից, դասախոսներն ու վարչական աշխատողները չունեն միանշանակ պատկերացում իրենց հանդեպ առաջադրվող նոր պահանջների վերաբերյալ: Առավել հաճախ այդ պահանջները հանգեցվում են նոր տեխնոլոգիական միջոցներով աշխատելու կարողությունների մասին պատկերացմանը:

3.4.16 Ֆոկուս խմբերին մասնակցած դասախոսներից և վարչական աշխատողներից ոմանք մասնակցել են վերապատրաստման դասընթացների՝ կրթական բարեփոխումների գործընթացների շրջանակներում:

3.4.17 Ընդհանուր առմամբ, մասնավոր ՄՈՒՀ-երի դասախոսներն ու վարչական աշխատողներն նվազ տեղեկացված են կրթական բարեփոխումների գործընթացներից, քան պետական ՄՈՒՀ-երի դասախոսներն ու վարչական աշխատողները:

3.4.18 Դասախոսները հիմնականում ցանկանում են տեղեկատվություն ստանալ այլ ՄՈՒՀ-երում իրենց դասավանդած առարկաների ուսումնական ծրագրերի, կոնկրետ մասնագիտությունների առարկաների ցանկերի վերաբերյալ, ինչը վկայում է, որ նրանց հետաքրքրությունը մասնագիտական կրթության համակարգից խիստ պրագմատիկ է, նեղացված և ուղղված է առավելապես սեփական դասավանդման առարկաների շրջանակներում մասնագիտական տեղեկատվությանը:

3.4.19 Դասախոսներն ընդհանուր առմամբ ցածր են գնահատում ուսանողների հետաքրքրվածությունն ուսումնական գործընթացով, ավելին, նրանք գտնում են, որ հետաքրքրվածության բացակայությունը պայմանավորված է կրթական համակարգի և աշխատանքային շուկայի միջև թույլ կապով, ինչի պատճառով, ըստ հարցվածների, նույնիսկ լավ ուսանողը, որ հաջողությամբ ավարտել է ՄՈՒՀ-ն, երաշխավորված չէ, որ կապահովվի աշխատանքով:

3.4.20 Հետագոտված ՄՈՒՀ-երից առանձնանում են Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտը, Գավառի պետական համալսարանը և Երևանի Խ. Աբովյանի պետական մանկավարժական համալսարանը, որոնք ունեն ստեղծված և գործող հստակ կառույցներ՝ որակի ապահովման, տեղեկատվական հոսքերի և այլ առումներով: Օրինակ, Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտում գործում է խորհրդատուների մեխանիզմը, որոնք բոլոր ամբիոններից ընտրված առավել փորձառու և պատրաստված դասախոսներն են: Այս դասախոսները հանդես են գալիս իբրև անհրաժեշտ տեղեկատվության փոխանցող, օրինակ, ուսանողների համար, մեթոդական և մեթոդաբանական խորհրդատվություն են փոխանցում իրենց կոլեգաներին և այլն: Գավառի պետական համալսարանը բավական ակտիվ է համացանցի կիրառության տեսանկյունից, ինչպես սեփական համալսարանի կայքի հնարավորություններից, այնպես էլ ԿԳՆ կայքէջից, համապատասխան կառույցների պաշտոնական կայքէջերից օգտվելու առումով: Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանը ակտիվ է վերապատրաստումների տեսանկյունից, ընդ որում, հանդես է գալիս ինչպես վերապատրաստողի դերում հայաստանյան այլ ՄՈՒՀ-երի համար, այնպես էլ դրա աշխատակիցները բավական հաճախակի վերապատրաստումներ են անցնում օտարերկրյա ՄՈՒՀ-երում, օտարերկրյա փորձագետների մոտ:

3.4.21 Ֆոկուս խմբերին մասնակցած դասախոսներին և վարչական աշխատողներին խնդրվել էր նաև գնահատել սեփական տեղեկատվական կարիքները հետագոտության համար թիրախային հետևյալ ուղղություններով.

- Աշխատակազմ- վարչական և ակադեմիական աշխատակազմ; տեխնիկական աշխատակազմ,
- Ակադեմիական/կրթական գործառույթներ,
- Ուսանողներ- Բակալավրի ծրագիր, Մագիստրոսի ծրագիր, հետբուհական կրթություն,

- Ֆինանսական կառավարում- աշխատակազմի և ուսանողների ֆինանսավորում, պետական ֆինանսավորում, օտարերկրյա ֆինանսավորում,
- Ենթակառուցվածք- շինություններ, հողատարածքներ, դասավանդում և մեթոդաբանական ունեցվածքներ, և այլն:

3.4.22 Այս բոլոր ուղղություններով ֆոկուս խմբերի մասնակիցները տվել են միջինում միանման գնահատականներ սեփական տեղեկատվական կարիքներին, ինչը դրսևորվում է իբրև որոշակի տեղեկատվության առկայություն, որը չի կարող լիարժեք համարվել:

2009 թվականին ընդունվել է ՀՀ ՄԿՈՒ ոլորտում սոցիալական գործընկերության հայեցակարգը, համաձայն որի՝ սոցիալական գործընկերության կողմերն են ՀՀ կառավարությունը, գործատուներին (գործարարներին) և կայացնող կազմակերպությունները և արհեստակցական միությունները:

Ներդիր 8

3.5 Գործատուների տեղեկատվական կարիքները

3.5.1 Գործատուների ֆոկուսավորված հարցազրույցին մասնակցել են 6 կազմակերպության ներկայացուցիչ: Մասնավորապես, ընդգրկված են եղել հետևյալ կազմակերպությունները՝ ՀՀ Գործատուների հանրապետական միություն, “ԲիԼայն համալսարան”, “ՎիվաՄեյլ ՄՏՄ”, “Ամերիաբանկ” ՓԲԸ, Երևանի կոնյակի գործարան, “Նաթֆուդ” ՓԲԸ:

3.5.2 Հարցված գործատուները նշել են, որ իրենց գործունեության ընթացքում իրենց միանշանակ պետք է գալիս տեղեկատվություն ՄՈՒՀ-երում առկա մասնագիտությունների ցանկի, ՄՈՒՀ-երում սովորողների պրակտիկ և գործնական աշխատանքների, ՄՈՒՀ-երի՝ միջազգային կրթական ծրագրերում

ներգրավվածության, ինչպես նաև կոնկրետ մասնագիտացումների՝ միջազգային կրթական ծրագրերում ներգրավվածության, ինչպես նաև շրջանավարտների միջին առաջադիմության վերաբերյալ:

3.5.3 Ինչ վերաբերում է ՄՈՒՀ-երի դասախոսական կազմի որակավորման, կամ ըստ մասնագիտությունների շրջանավարտների թվի վերաբերյալ տեղեկատվությանը, ապա գործատուները նշել են, որ նման տեղեկատվություն հնարավոր է, որ պետք գա, հարցվածներից ոմանք գտնում են, որ այս տեղեկատվությունը իրենց գործունեության ընթացքում ընդհանրապես պետք չի գա:

3.5.4 Հարցված գործատուներին խնդրվել էր նաև գնահատել, թե վերոնշյալ ուղղություններից որ մասով իրենք տեղեկատվության պակաս ունեն: Հարցվածները նշել են, որ ընդհանրապես տեղեկատվություն չունեն ՄՈՒՀ-երի դասախոսական կազմի որակավորման վերաբերյալ:

Տեղեկատվությունը բացակայում է նաև ըստ մասնագիտությունների շրջանավարտների թվի և շրջանավարտների միջին առաջադիմության վերաբերյալ:

3.5.5 Ընդհանուր առմամբ, հարցված գործատուները ցածր են գնահատում սեփական տեղեկացվածության աստիճանը և խուսափել են նշել “ամբողջությամբ ունեմ պահանջվող ինֆորմացիան” տարբերակը: Պատասխանների ճնշող մեծամասնությունը տրված է “որոշակի ինֆորմացիա ունեմ, բայց բավարար չի” տարբերակի շրջանակներում:

2010 թվականի փետրվարի 17-ին կայացել է ՀՀ կրթության և գիտության նախարարության աջակցությամբ Բրիտանական խորհրդի «Հմտություններ աշխատանքում» ծրագրի շրջանակներում իրականացվող «Մասնագիտական կրթության և ուսուցման ոլորտում գործատուների ներգրավման ուղիները» ձեռնարկի շնորհանդեսը, որը Բրիտանական խորհրդի հայաստանյան գրասենյակի տնօրեն Արևիկ Սարիբեկյանի կարծիքով կարող է ծառայել որպես ուղեցույց գործատուների համար: Կրթության և գիտության նախարարությունը նպաստել է ձեռնարկի տարածմանը՝ թե՛ բիզնեսի շրջանակներում, թե՛ քոլեջներում:

Ներդիր 9

3.5.6 Բոլոր հարցվողները նշել են, որ այս տեղեկատվության ստացման ամենաարդյունավետ եղանակը էլեկտրոնայինն է: Ընդ որում, որպես այդ տվյալների ստացման օպտիմալ հաճախականություն առավելապես նշվել է երեք ամիսը մեկ անգամ պարբերականությունը:

3.5.7 ՀՀ Գործատուների հանրապետական միության գործադիր տնօրենը նշում է, որ անհրաժեշտ տեղեկատվության ստացման ամենաարդյունավետ ձևը կլինե՞ր սոցիալական գործընկերության ինստիտուտների ճանապարհի կիրառումը և գործարար շրջանակներին այդ կառույցներում լայնորեն ընդգրկելը:

3.5.8 ՀՀ ԿԳՆ ԿԱԻ Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոնի (ՄԿՈԻԶԱԿ) կողմից իրականացվող բոլոր միջոցառումների, այդ թվում՝ հետազոտությունների, գնահատումների, վերապատրաստումների, մոնիթորինգի և խորհրդատվությունների ուսումնասիրության, դրանց ընդհանրական վերլուծության արդյունքում պարզ է դարձել, որ պետական կրթական չափորոշիչների և համապատասխան մոդուլային ուսումնական ծրագրերի ներդրման գործընթացին, հետևաբար նաև՝ մասնագիտական կրթության ոլորտի զարգացմանը խոչընդոտող ամենահիմնարար խնդիրը եղել և մնում է սոցիալական գործընկերության թույլ համակարգը:

3.5.9 2010թ. դեկտեմբերին ՀՀ Տավուշի մարզում կազմակերպվել է կլոր սեղան քննարկում՝ «Մասնագիտական կրթությունը՝ որպես տարածաշրջանային

Հայաստանում մատների վրա կարելի է հաշվել այն գործատուներին, որոնք լրջորեն աշխատում են բարձրագույն կրթական հաստատությունների հետ. «Մինոֆսիս» ասելուց հետո մենք կանգ ենք առնում, որվիհետև, ըստ էության, տեղական գործատուի հետաքրքրվածությունը կրթական համակարգի վերաբերյալ շատ քիչ է: Մասնագետը կայանում է ոչ միայն գիտելիք ստանալու արդյունքում, այլև պետք է ունենա այդ գիտելիքը կիրառելու հմտություն, իսկ դա առանց գործատուի մնում է թերի

ԵՊՀ ռեկտոր Արամ Միմոնյան

Ներդիր 10

զարգացման նախապայման» թեմայով: Քննարկմանը ներկա գործատուների կարծիքով մասնագիտական կրթությունը նպատակային պլանավորելու համար նախ և առաջ անհրաժեշտ է բացահայտել մարզային մասնագիտական կարիքները՝ ըստ արդյունաբերական համալիրների, իսկ ուսումնական հաստատությունները խորությամբ պետք է տիրապետեն այն մասնագիտություններին, որոնց գծով իրականացնում են կրթություն: Ներկայումս, ըստ նրանց, գործատուն իր կադրին չի փնտրում մասնագիտական կրթական հաստատություններում:

3.5.10 Որպես կադրերի ընտրության առաջնային գործոն՝ հարցված գործատուները նշում են պահանջվող մասնագիտությունը ունենալու, համապատասխան աշխատանքային փորձ ունենալու հանգամանքները: Բացի սրանցից, տարբեր հարցվողների կողմից առաջնային կարևորություն տրվել է նաև սուբյեկտիվ գործոններին, ինչպես՝ լավ մարդ լինելու կամ նախապես ծանոթ լինելու հանգամանքը:

3.5.11 Ուշագրավ է, որ կադրերի ընտրության հարցում հարցված գործատուները քիչ նշանակություն են տվել այն հանգամանքին, թե ով է երաշխավորել տվյալ անձնավորությանը, ինչը գոնե խոշոր գործատուների պարագայում կասկածի տակ է դնում խնամի-ծանոթ-բարեկամ անսասան շղթայի միանշանակությունը:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը կից գործող մասնագիտական կողմնորոշման կենտրոնի տվյալների համաձայն, Հայաստանում շուրջ 22.000 երիտասարդ այսօր զբաղվածության խնդիր ունի: Երիտասարդները զբաղվածության խնդիր ունեն ինչպես Երևանում, այնպես էլ մարզերում, մասնագիտությունները տարբեր են:

Ներդիր 11

3.6 Աշխատանքի

տեղավորման գործակալությունների տեղեկատվական կարիքները

3.6.1 Հետազոտության շրջանակներում ֆոկուսավորված հարցազրույցի են ենթարկվել 5 մասնավոր աշխատանքի տեղավորման գործակալությունների ներկայացուցիչներ, ինչպես նաև Զբաղվածության պետական ծառայության ներկայացուցիչը:

3.6.2 Ընդհանուր առմամբ, բոլոր հարցվողներն էլ կարևորել են միայն ՄՈՒՀ-երում առկա մասնագիտությունների ցանկի վերաբերյալ տեղեկատվությունը, որը, ըստ նրանց գնահատականների, միանշանակ պետք է գործակալությունների գործունեության ընթացքում:

3.6.3 Մնացած բոլոր կետերի վերաբերյալ տեղեկատվությունը, ինչպես ՄՈՒՀ-երի սովորողների պրակտիկ և գործնական աշխատանքների վերաբերյալ, ՄՈՒՀ-երի դասախոսական կազմի որակավորման վերաբերյալ, ՄՈՒՀ-ների՝ միջազգային

ծրագրերում ներգրավվածության վերաբերյալ և այլն, անվերապահորեն չեն ընդունվել իբրև միանշանակորեն պիտանի իրենց գործունեության ընթացքում: Առավել գերակշռել են “հնարավոր է, որ պետք զա” պատասխանները:

3.6.4 Ընդհանուր առմամբ, այս պատասխանները վկայում են այն մասին, որ աշխատանքի տեղավորման գործակալությունները, համագործակցելով այն գործատուների հետ, որոնք իրենք էլ չունեն հստակ պատկերացումներ մասնագիտական կրթության համակարգից իրենց անհրաժեշտ տեղեկատվության մասին, գործում են անհարկապես տեղեկատվական կարիքների դաշտում: Այսպիսով, նրանք կարիք են զգում այն տեղեկատվության, որը պահանջարկված է գործատուների կողմից:

3.6.5 Այս եզրակացությունն ավելի ակնհայտ է դառնում, երբ դիտարկում ենք աշխատանքի տեղավորման գործակալությունների

ներկայացուցիչների պատասխանները մասնագիտական կրթության համակարգի մասին տեղեկատվության պակասի վերաբերյալ: Ըստ այդմ, հարցվածներից և ոչ մեկը չի նշել որևէ կետ, որի վերաբերյալ ունի բավարար տեղեկատվություն: Միակ կետը, որի վերաբերյալ որոշ չափով, սակայն այնուամենայնիվ անբավարար տեղեկատվություն ունեն հարցվածների մեծամասնությունը, ՄՈՒՀ-երում առկա մասնագիտությունների ցանկի վերաբերյալ տեղեկատվությունն է, ինչը կարելի է պայմանավորված համարել նրանով, որ հենց այս կետի վերաբերյալ ինֆորմացիան էլ համարվել էր առավելապես պետք եկող իրենց գործունեության ընթացքում:

3.6.6 Որպես մասնագիտական կրթության համակարգի վերաբերյալ տեղեկատվության ստացման ամենաարդյունավետ ձև՝ աշխատանքի տեղավորման

2009 թվականին կողմնորոշման ուղղված հետազոտության ժամանակ հարցված ուսանողների երկու երրորդը չկարողացան պատասխանել, թե ինչու են ընտրել այդ մասնագիտությունը:

Սոնա Հարությունյան,

ՀՀ Զբաղվածության պետական ծառայության պետ

Ներդիր 12

գործակալությունների ներկայացուցիչները նշում են էլեկտրոնային տարբերակը՝ համակարծիք լինելով գործատուների հետ:

3.6.7 Աշխատանքի տեղավորման գործակալությունների հարցված ներկայացուցիչները մասնագիտական կրթության համակարգի վերաբերյալ տեղեկատվության ստացման օպտիմալ հաճախականություն առավել հաճախ դիտում են տարեկան մեկ անգամ պարբերականությունը ի տարբերություն գործատուների, որոնք նշում էին եռամսյակը մեկ անգամ օպտիմալ պարբերականության մասին:

3.6.8 Պատասխանելով այն հարցին, թե ինչ հիմնական տեղեկատվություն են ուզում նրանցից ստանալ գործատուները, աշխատանքի տեղավորման գործակալությունների հարցված ներկայացուցիչները առավել հաճախ առաջնահերթությունը տվել են “Համապատասխան աշխատանքային փորձ ունեցող թեկնածուների վերաբերյալ” տարբերակին, պակաս կարևոր է համարվել թեկնածուների երաշխավորագրերի վերաբերյալ տեղեկատվությունը:

3.6.9 Աշխատանքի տեղավորման գործակալությունների և գործատուների տեղեկատվական կարիքների գրանցված տարբերությունները կարող են հետևանք լինել այն հանգամանքի, որ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Երիտասարդների մասնագիտական կողմնորոշման կենտրոնի» կողմից Երեւանի դպրոցներում անցկացվել է մասնագիտական կողմնորոշման բացահայտմանն ուղղված հարցում: Կենտրոնի տնօրեն Հայկուհի Գեորգյանի փոխանցմամբ՝ հարցմանը մասնակցած 1337 աշակերտների մեծ մասը նախընտրում է բժշկի, տնտեսագետի, ծրագրավորողի և իրավաբանի մասնագիտությունները: Աշակերտները, չտարբերելով մասնագիտությունը զբաղմունքից, ինչպես նաև ծանոթ չլինելով աշխատաշուկայի առաջարկին և պահանջարկին, կանգնած են հավանական սխալ կամ ոչ արդյունավետ ընտրության առջև, ինչի արդյունքում մեծ գումարներ ծախսելով՝ մի քանի տարի անց կարող են լրացնել գործազուրկ երիտասարդների շարքերը կամ աշխատել այլ մասնագիտությամբ:

Ներդիր 13

հետազոտության շրջանակներում ընդգրկված էին առավել խոշոր գործատուների ներկայացուցիչները, որոնք իրենք ունեն սեփական կադրային քաղաքականությունը, համապատասխան բաժիններ կամ վարչություններ: Այս գործատուների համար աշխատանքի տեղավորման գործակալությունները չեն հանդիսանում անհրաժեշտ կադրերի ընտրության հիմնական աղբյուր, քանի որ նրանք բավականաչափ ճանաչված են և այստեղ աշխատելու ցանկություն ունեցողները անմիջականորեն են դիմում այս ընկերություններին:

3.6.10 Այնինչ այն գործատուները, որոնք առավել ակտիվ են համագործակցում աշխատանքի տեղավորման գործակալությունների հետ, հիմնականում ներկայացնում են փոքր և միջին բիզնեսը, առաջարկում են ավելի ցածր որակավորում ունեցող աշխատանքներ: Հետևաբար աշխատանքի տեղավորման գործակալությունների և խոշոր գործատուների տեղեկատվական կարիքները չեն կարող նույնական լինել:

3.6.11 Վերջին շրջանում խիստ թափ են ստացել աշխատանքի տեղավորման էլեկտրոնային կայքերը, հայտարարությունների էջերը, որոնք էլի ունեն հստակ մասնագիտացում: Օրինակ՝ www.careercenters.am կայքը, որն անգլիալեզու է և ներկայացնում է ավելի բարձր որակավորված աշխատանքի պահանջարկը ինչպես միջազգային կազմակերպությունների շրջանում, այնպես էլ արևմտյան կազմակերպությունների մոդելով աշխատող տեղական ձեռնարկություններում: Ի հակադրություն սրա, գործող մյուս կայքերում կարելի է ավելի հաճախ հանդիպել ցածր որակավորում պահանջող աշխատատեղերի, փոքր և միջին բիզնեսի կողմից ներկայացվող պահանջարկի վերաբերյալ տեղեկատվության:

4. Ամփոփում

4.1 Այսպիսով, ամփոփելով իրականացված հետազոտության արդյունքների վերլուծությունը, կարող ենք նշել, որ մասնագիտական կրթության կառավարման տեղեկատվական համակարգի շահառուների տեղեկացվածությունը մասնագիտական կրթության ոլորտից ավելի շուտ բավարար չէ, ինչը հետևանք է այս ոլորտում միասնական տեղեկատվական բազայի բացակայության: Ասվածի վկայությունն է նաև այն, որ հետազոտության շրջանակներում ընդգրկված շահառու խմբերից ոչ մեկը լուրջ խնդիր չի համարել մասնագիտական կրթության ոլորտում տեղեկատվական հոսքերի թափանցիկությունը: Այսպիսով, ինֆորմացիան ոչ թե փակ է, այլ կարիք ունի ճիշտ մեխանիզմով հավաքագրման և հետագա մատակարարման պոտենցիալ սպառողներին:

4.2 Այնուամենայնիվ, բացի մասնագիտական կրթության տեղեկատվական բազայի ստեղծումից, առաջնահերթ խնդիր է այս ոլորտում իրականացվող ծրագրերի

Հայաստանում կրթական ծրագրերի լիցենզավորման պայմանների և պահանջների վերահսկման էլեկտրոնային կառավարման ավտոմատացնելու է այնպիսի տեխնիկական վերահսկողության գործառույթներ, ինչպիսիք են ուսումնական հաստատությունների ուսանող-պրոֆեսորադասախոսական կազմի, պրոֆեսորադասախոսական անձնակազմի հիմնական հաստիքային և գիտական աստիճան և (կամ) կոչում ունենալու սահմանային ցուցանիշները, տարածքները զբաղեցնելու վերաբերյալ հաշվարկային նվազագույն ցուցանիշները, մեկ ուսանողի հաշվով ուսումնական լաբորատոր և մարզական բազաների հագեցվածության ցուցանիշները, զբաղեցրած տարածքների վարձակալության հիմունքով կնքված պայմանագրերի ժամկետների, պրոֆեսորադասախոսական անձնակազմի հետ կնքված աշխատանքային պայմանագրերի ժամկետների, ուսումնաարտադրական պրակտիկաների ժամկետների ավարտը:

Ներդիր 14

համակարգումն ու տեղակարգումը: Նման համակարգման բացակայության պայմաններում այդ ուղղությամբ ձեռնարկվող քայլերի արդյունավետությունը էականորեն կնվազի: Մասնավորապես, դաշտում արդեն իսկ առկա են որոշ նախաձեռնություններ, ինչպես ՀՀ-ում կրթական ծրագրերի լիցենզավորման պայմանների և պահանջների վերահսկման և էլեկտրոնային կառավարման համակարգը, որի շնորհանդեսը ԿԳՆ-ում կայացել է ս.թ. փետրվարի 18-ին, որոնք մասամբ համադրվում են մասնագիտական կրթության կառավարման տեղեկատվական համակարգի հետ:

4.3 Այսպիսով, ոլորտային քաղաքականության կարևոր հիմնահարց է դառնում նախագծվող և իրականացվող նմանատիպ ծրագրերի գրագետ կոորդինացումն ու տեղաբաշխումը:

4.4 Մասնագիտական կրթության ոլորտում տեղեկատվության հիմնական արտադրողները հետևյալն են.

- | | |
|--|---|
| 1. տարբեր պետական կառույցներ, մասնավորապես ՀՀ կրթության և գիտության նախարարություն | 8. նախնական, միջին և բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատությունները |
| 2. ոլորտում գործող գրեթե բոլոր կազմակերպությունները (ԿԱԻ, ԿՏԱԿ, ՄԿՈՒԶԱԿ և այլն) | 9. մասնագիտական կրթության ոլորտի գործիչները |
| 3. երիտասարդական մասնագիտական կողմնորոշման կենտրոնը | 10. տեղական ինքնակառավարման մարմինները |
| 4. գործատուներն ու գործարարները | 11. արհմիությունները |
| 5. մարզպետարանները | 12. ԶԼՄ – ները |

6. ուսանողները

13. ծնողները

7. զբաղվածության ծառայությունները

4.5 Մասնագիտական կրթության կառավարման տեղեկատվական համակարգի շահառուների հիմնական տեղեկատվական կարիքները հետևյալն են.

Շահառու	Տեղեկատվական կարիքները
1 Դասախոսներ	այլ ՄՈՒՀ-երում իրենց դասավանդած առարկաների ուսումնական ծրագրերը, կոնկրետ մասնագիտությունների առարկաների ցանկերը
2 ՄՈՒՀ-երի ղեկավար կազմ	կրթական չափորոշիչների մասին հստակ տեղեկատվությունը, կրեդիտային համակարգի մասին բավարար տեղեկատվությունը, արտերկրի մասնագիտական կրթական համակարգերում կատարվող բարեփոխումների առանձնահատկությունների և գործընթացների մասին տեղեկատվությունը, մասնագիտական կրթական հաստատության որակի հստակ չափորոշիչների մասին տեղեկատվությունը:
3 Ուսանողներ	Դիպլոմների փոխճանաչման մասին տեղեկատվությունը, Արտերկրում սովորելու ծրագրերի և պայմանների մասին տեղեկատվությունը Ուսանողական վարկային համակարգի մասին Ուսանողների փոխանակման ծրագրերի մասին տեղեկատվությունը Ուսանողների ներբուհական և միջբուհական տեղափոխման մասին Ըստ առանձին մասնագիտությունների սովորողների, շրջանավարտների թվաքանակների մասին տեղեկատվությունը ՄՈՒՀ-երում առկա մասնագիտությունների
4 Աշխատանքի	

5	տեղավորման գործակալություններ Գործատուներ	<p>ցանկը</p> <p>ՄՈՒՀ-երում առկա մասնագիտությունների ցանկը, ՄՈՒՀ-երում սովորողների պրակտիկ և գործնական աշխատանքները, ՄՈՒՀ-երի՝ միջազգային կրթական ծրագրերում ներգրավվածությունը, կոնկրետ մասնագիտացումների՝ միջազգային կրթական ծրագրերում ներգրավվածությունը, շրջանավարտների միջին առաջադիմությունը</p>
---	---	--

4.6 Ըստ փորձագետների, տարբեր շահառուներ ըի տեղեկատվական կարիքները հետևյալն են.

Կառավարության համար՝

- տնտեսության զարգացման միտումները,
- աշխատաշուկայի կանխատեսումները,

Գործատուի համար՝

- մասնագիտության նկարագրությունը,
- որակավորումը (մասնագիտացումը),
- ուսուցանող կազմակերպությունների վերաբերյալ մանրամասն տեղեկությունները,
- ուսումնական պլաններ,
- ըստ զբաղմունքի՝ հմտությունները,
- աշխատաշուկայի կանխատեսումները,
- տնտեսության զարգացման միտումները,

Դպրոցների շրջանավարտների, ուսանողների, աշխատանք փնտրողներ ի, զբաղվածության պետական ծառայության, կրթական հաստատությունների համար՝

- մասնագիտության նկարագրությունը,

- որակավորումը (մասնագիտացումը),
- ուսուցանող կազմակերպությունների վերաբերյալ մանրամասն տեղեկությունները,
- ուսումնական պլանները,
- աշխատաշուկայի պահանջարկը,
- ըստ զբաղմունքի՝ հմտությունները,
- դասավանդողների վերաբերյալ տվյալները,
- ծրագրերի տևողությունը,
- ուսուցման արժեքը,
- կրթաթոշակների, դրամաշնորհների հնարավորությունը և այլն:

4.7 ՄՈՒՀ -երի ղեկավար կազմի կարծիքով, շահառու կողմերի հիմնական տեղեկատվական կարիքները հետևյալն են.

- Դասախոսներին առավել կարևոր է առկա ուսումնական պլանների, մոդուլային ծրագրերի և մեթոդական նյութերի մասին տեղեկատվությունը, կրեդիտային համակարգի դասավանդման չափանիշները, համագործակցություն հնարավորությունները, նաև արտաքին, մասնագիտական նորությունները:
- Ուսանողները հետաքրքրված են հետևյալ տեղեկատվությամբ. տարբեր առարկաների վերաբերյալ առաջարկվող խնդիրներով, դրանց լուծման մեթոդներով, նոր մեթոդական նյութերով և հարցաշարերով, կրեդիտային համակարգում սովորելու հիմունքներով, մասնագիտական, գիտահետազոտական ծրագրերի մասին տեղեկատվությամբ, ավարտելուց հետո ուսումը շարունակելու հնարավորություններով, քննությունների արդյունքների մասին տեղեկատվությամբ, համապատասխան օրենքներով, դրանց փոփոխություններով, մասնագիտական նորություններով, օլիմպիադաներով:

- Դիմորդներին հետաքրքրում են մասնագիտական նոր չափորոշիչները, ընդունելության պայմանները և թեստերի օրինակները, վարձավճարի չափը, տվյալ հաստատության ֆինանսական հնարավորությունները:
- Վարչական աշխատողների համար կարևոր է տեղեկանալ ոլորտին վերաբերող նորմատիվային փաստաթղթերին, զարգացման ծրագրերի և և բարեփոխումներին:
- Գործատուները մեծ նշանակություն են տալիս ուսումնառության արդյունքներին, ուսումնական պլանների, ուսանողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների մակարդակի վերաբերյալ ինֆորմացիային:

4.8 ՄՈՒՀ -երի ղեկավար կազմի ներկայացուցիչները առանձնացրել են ՄՈՒՀ-ի արդյունավետության հետևյալ ցուցանիշները.

- սովորող ուսանողների թիվը,
- դասավանդող դասախոսների մասնագիտական պատրաստվածությունը,
- տվյալ հաստատության ուսանողների ցածր շարժունակությունը այլ ուսումնական հաստատությունների նկատմամբ,
- այլ ուսանողների բարձր շարժունակությունը դեպի տվյալ հաստատություն,
- ուսանողների առաջադիմությունը,
- տվյալ հաստատության ակադեմիական գործունեությունը,
- հաստատության կողմից անցկացվող դաստիարակչական աշխատանքները,
- հասարակության հետ կապերի զարգացման աշխատանքներ,
- ուսումնական պրոցեսի ճիշտ կազմակերպումը,

- կառավարման համակարգի արդյունավետությունը,
- տվյալ հաստատության շրջանավարտների՝ աշխատանքի ընդունվելու ցուցանիշը,
- մասնագիտական կրթական հաստատության բյուջեի ծավալները ըստ տարիների,
- հաստատությունում ուսանողի ինքնազգացողությունը,
- նյութատեխնիկական հագեցվածության աստիճանը,
- ընդունելության քննությունների ընթացքում դիմորդների թիվը,
- ուսումնական և արտադրական պրակտիկաները,
- ուսուցման գործընթացում դասավանդման էլեկտրոնային միջոցների լայն կիրառումը,
- ֆինանսական արդյունավետությունը,
- գրադարանի առկայությունը:

4.9 Մասնագիտական կրթության կառավարման տեղեկատվական համա կարգի գործարկման տեսանկյունից հետազոտության արդյունքներով, ըստ էության, դուրս են բերվել մի շարք բարենպաստ հանգամանքներ, մասնավորապես՝ ՄՈՒՀ-երում ձևավորվել է էլեկտրոնային միջոցներով աշխատելու, տեղեկատվություն ստանալու և փոխանցելու մեխանիզմ, ավելին՝ ՄՈՒՀ-երի ներկայացուցիչները պատրաստակամ են օգտագործել այդ միջոցները՝ որպես իրենց իսկ գնահատմամբ տեղեկատվության փոխանցման առավել արդյունավետ ուղիներ: ՄԿԿՏՀ-ի գործարկման համար բարենպաստ հանգամանք է նաև այն, որ ոլորտի շահակիցների կողմից գիտակցվում է համակարգված տեղեկատվություն ստանալու և փոխանցելու անհրաժեշտությունը:

4.10 Մասնագիտական կրթության կառավարման տեղեկատվական համակարգի շահառուների տեղեկատվական կարիքների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ ՄԿԿՏՀ-ի մշակումն ու գործարկումը հանրային պահանջարկ ունեցող և հետագայում շահառուների աջակցության և գործուն մասնակցության հիմքեր ունեցող նախաձեռնություն է, որն իսկապես կարող է էական ներդրում ունենալ մասնագիտական կրթության ոլորտում բարեփոխումների արդյունավետության բարելավման հարցում: